Ազգ
Azg
23 ՆՈՅԵՄԲԵՐ 2007 ՈՒՐԲԱԹ 216 (3868)

Ադրբեջանը ցանկանում է հետ ստանալ իր մարդասպանին

Հունգարիա են ուղարկվել փաստաթղթեր, որպեսզի կազմակերպվի հայ սպա Գուրգեն Մարգարյանին քնած վիճակում սպանած մարդասպան Ռամիլ Սաֆարովի էքստրադիցիան Ադրբեջանին: Այդ մասին հայտնել է Ադրբեջանի արդարադատության նախարարի տեղակալ Նազիմ Ալեքպերովը: Հաղորդվում է, որ մոտ օրերս նախատեսվում է Ադրբեջանի արդարադատության նախարարի այցը Հունգարիա՝ այդ հարցի քննարկման համար:

Համաներումը կազդի նաեւ հայերի վրա

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու հայտարարած համաներումը կազդի նաեւ այդ երկրի բանտերում գտնվող Հայաստանի քաղաքացիների վրա: Հիշեցնենք, որ Վրաստանում Հայաստանի 25 քաղաքացի իր պատիժն է կրում այդ երկրի սահմանը անօրինաբար հատելու մեղադրանքով: Նրանք որպես կանոն այն քաղաքացիներն են, որոնք ժամանակին Ռուսաստանի տարածքից մուտք են գործել Աբխազիա եւ Հարավային Օսիա, հետագայում Վրաստանի սահմանը հատելիս անձնագրերում առկա կնիքները պատճառ են դարձել նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու:

Հարավային Կովկասում նախագահության երկրորդ ժամկետին գնալն արդեն դարձել է սովորություն

Ու ժողովրդավարությունն էլ առանձնապես չի տարբերվում

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իշխանական «Միասնական ազգային շարժում» կուսակցությունն այսօր Թբիլիսիում կգումարի համագումար՝ երկրի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու թեկնածությունը հունվարի 5-ին անցկացվելիք նախագահական արտահերթ ընտրություններում երկրորդ ժամկետով առաջադրելու նպատակով: Ամենայն հավանականությամբ, այսօր իսկ հստակ կլինի, թե նախագահական ընտրություններին մասնակցելու մտադրության դեպքում Վրաստանի նախագահի պարտադիր հրաժարականը երբ կներկայացվի:

Վրաստանի խորհրդարանը, «Նովոստի Գրուզիի» գործակալության տեղեկացմամբ, հաստատել է «Անօրինական եկամուտների օրինականացմանն աջակցելու կանխման» օրենքի փոփոխությունները, որոնց համաձայն, Վրաստանի ազգային բանկի, ֆինանսների, տնտեսական զարգացման եւ արդարադատության նախարարությունների փոխարեն մոնիտորինգ կիրականացնի ֆինանսական մոնիտորինգի ծառայությունը:

Ընդ որում, ընդլայնվել է նաեւ մոնիտորինգի ենթակա կազմակերպությունների ու գործարքների ցանկը, մասնավորապես ընդգրկելով միկրոֆինանսական ընկերություններին, բանկային համակարգի էլեկտրոնային համակարգերով դրամական փոխանցումներ իրականացնող անձանց: Մոնիտորինգի կենթարկվեն նաեւ «ոչ սովորական գործարքները»՝ բարդ, անսովոր մեծ կամ էլ տնտեսական բովանդակության առումով ոչ հստակ, նաեւ կասկածելի գործարքները:

Տես էջ 8

ՀԱՄԱՌՈՏ

Ռուսաստանի նախագահը Նոբելյան մրցանակի թեկնածու

Շվեյցարական Ցյուրիխ քաղաքում գտնվող Այլընտրանքային էներգիայի ուսումնասիրման միջազգային կենտրոնը առաջարկել է Վլադիմիր Պուտինի թեկնածությունը 2008-ի Նոբելյան խաղաղության մրցանակի համար: Կենտրոնի տնօրեն Անետ Էռնեստն իր առաջարկը բացատրում է, որ Ռուսաստանի նախագահը միակ ղեկավարն է, որը հասկանում է նանոտեխնոլոգիաների նշանակությունը եւ այժմ ստեղծում է ռուսական գիտական կենտրոն, որը պետք է այդ տեխնոլոգիաների օգնությամբ ստեղծի նավթին այլընտրանք համարվող էներգիայի միջոց: Ըստ գիտնականի, նման տեխնոլոգիայի ստեղծումը հնարավորություն կտա հետագայում խուսափելու նավթային պատերազմներից:

Էռնեկյանը նոր օդանավակայան է ձեռք բերում

Արգենտինահայ գործարար Էդուարդո Էռնեկյանի Corporacion America ընկերությունը նախնական համաձայնագիր է ստորագրել Ուրուգվայի Պունտա դել Էստե քաղաքի միջազգային օդանավակայանի հավատարմագրային կառավարումը մինչեւ 2019 թվականը ստանձնելու մասին: Պունտա դել Էստեն Հարավային Ամերիկայի զբոսաշրջության կենտրոններից է: Հիշեցնենք, որ Էդուարդո Էռնեկյանը Երեւանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հավատարմագրային կառավարիչն է, նա օդանավակայաններ ունի նաեւ Արգենտինայում, Իտալիայում եւ Էկվադորում:

ՕԵԿ-ը չմիացավ Տեր-Պետրոսյանին

«Օրինաց երկիր» կուսակցության գրասենյակից հաղորդում են, որ երեկ տեղի է ունեցել քաղաքական խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվել է Հայաստանի նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի միավորման կոչը: Հաղորդվում է, որ նիստում ընդգծվել է, որ ՕԵԿ վարչությունն արդեն ընդունել է համապատասխան որոշում կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանին ՀՀ նախագահի թեկնածու առաջադրելու վերաբերյալ եւ այն հրապարակվել է մեկ ամիս առաջ: Մեկ այլ որոշմամբ նախընտրական շտաբի ղեկավար է նշանակվել ՕԵԿ խմբակցության քարտուղար Հեղինե Բիշարյանը:

Հայկական մշակույթի օրեր Իտալիայում

Հայաստանի ԱԳՆ-ից հաղորդում են, որ նոյեմբերի 17-ին Օլիվիերի Իբիսկոս հրատարակչատան հետ համատեղ Հայաստանի դեսպանությունը կազմակերպել էր հանրահայտ իտալացի արվեստագետ, հայ ֆուտուրիստական պոեզիայի գիտակ, պրոֆեսոր Մարիո Վերդոնեի՝ Եղիշե Չարենցի «Հայկական տաղերի» իտալերեն թարգմանության գրքի շնորհանդեսը: Ելույթներ են ունեցել իտալացի ճանաչված հայագետներ եւ արվեստագետներ: Իսկ նոյեմբերի 19-ին Հռոմի Վաշելլո ճանաչված թատրոնի բեմում Երեւանի մնջախաղի պետական թատրոնը ներկայացրել է «Դեւը» ներկայացումը, որը մեծ հաջողություն է ունեցել:

«Ոսկե ծիրանը» կհամագործակցի «Գաֆեսճյանի» հետ

«Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը 2008 թվականից կունենա գլխավոր գործընկեր՝ ի դեմս «Գաֆեսճյան» թանգարան-հիմնադրամի: Սպասվում է, որ առաջիկա օրերին «Ոսկե ծիրանի» եւ «Գաֆեսճյան» թանգարան-հիմնադրամի ղեկավարները կստորագրեն համագործակցության պայմանագիր: Հիմնադրամը փառատոնի աշխատանքների համար կտրամադրի «Կասկադ» համալիրի երեք դահլիճները, կկազմակերպվեն բացօթյա կինոցուցադրություններ, ինչը հնարավորություն կընձեռի բոլորին անվճար դիտելու եվրոպական լավագույն ֆիլմերը:

Հասարակական-քաղաքական հավելված՝ վաղը

Վաղը լույս կտեսնի **«Ազգի»** հասարակական-քաղաքական հավելվածը, որտեղ կարող եք ընթերցել.

Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի ծննդյան 50-ամյակին ընդառաջ՝ Գրիգոր Ջանիկյանի «Իրապատում առասպել» հրապարակումը, միջնադարյան հայ մշակույթի դեմքերից մեկի՝ ճարտարապետ, մանրանկարիչ եւ քանդակագործ Մոմիկի վերաբերյալ ուսումնասիրություններից քաղած Մարիետա Խաչատրյանի նյութը, հուշեր բելգիահայ անվանի մտավորական, գիտնական Արթակ Մխիթարյանի մասին: Պատմական գիտությունների դոկտոր Ստեփան Ստեփանյանը ներկայացնում է փիլիսոփայական գիտությունների դոկտոր Միքայել Մինասյանի «Ժամանակը, մարդը եւ նրա գործը» աշխատությունը: Քաղաքական գիտությունների դոկտոր Արմեն Այվազյանը մեր հավելվածում մտորում է, թե ո՞վ է հայը՝ ուժեղ ազգային ինքնությունը պետության կառուցման ռազմավարական ռեսուրս անվանելով: Հավելվածում այլ հետաքրքրաշարժ հրապարակումներ եւս կգտնեք:

«Աթաթուրքի կտակը ենթադրում է ընդարձակված Թուրքիա»



YIL YAŞAYACAK

GÜNEŞ

AL SANA HARİTA

20 yıl yetecek GAZ bulundu

«Ազգը» նախորդ համարում «Մեծ Մերձավոր Արեւելքն ըստ թուրքերի» վերնագրով անդրադարձել էր թուրքական «Գյունեշ» թերթի հրապարակած քարտեզին, որտեղ Թուրքիան ընդարձակված էր, ներառելով Էգեյան ծովի հունական կղզիները, Կիպրոսը, Հունաստանի, Սիրիայի, Իրաքի հյուսիսային հատվածները, ինչպես նաեւ Հայաստանն ամբողջությամբ:

Արդարությունը պահանջում է ասել, որ «Ահա քեզ քարտեզ» մակագրությամբ հրապարակելով խնդրո առարկա քարտեզը, «Գյունեշ» թերթն իրականում դատապարտում էր դրա հեղինակներին, որոնք դա տարածում են ինտերնետի միջոցով: Ընդարձակված Թուրքիայի քարտեզին նույն օրը՝ նոյեմբերի 21-ին միեւնույն տեսանկյունից է մոտեցել նաեւ «Թերջումանը»:

Թուրքական այս թերթը գրում է. «Այս քարտեզը, որը կազմվել է որպես հակազդեցության դրսեւորում մասնատված Թուրքիայի եւ ենթադրվող Քրդիստանի քարտեզներին, ձեռքից-ձեռք է անցնում: «Կատարում ենք Աթաթուրքի կտակը» մակագրությամբ մատուցվող այս քարտեզը տեղիք է տալիս հետեւյալ մեկնաբանությունների. «Կիպրոսն ամբողջությամբ վերցնելով՝ կիպրական հարցը, Հայաստանը գրավելով՝ Հայկական հարցն ենք վերջնականապես լուծում: Ավելին, դրանով եղբայրական Ադրբեջանի վրեժը լուծելիս, միաժամանակ փրկում ենք բռնագրավված Ղարաբաղը: «Ազգային ուխտով» նախանշված Մոսուլի եւ Քիրքուքի առումով կատարում ենք Աթաթուրքի կտակը: Հետ ենք վերցնում ձեռքից բաց թողած հունական կղզիները, Ստամբուլի հունական պատրիարքարանի անկախության նկրտումների դիմաց գրավում ենք Աթաթուրքի ծննդավայր Սալոնիկն ու Արեւմտյան Թրակիան, եւ տեղի թուրքերին ազատում ոտնձգություններից: Արժանի դաս ենք տալիս Ալեքսանդրետի սանջակին հավակնող Սիրիային եւ գրավում նախկինում մեզ պատկանող սիրիական տարածքները»: Եթե այս ամենն իրողություն դառնա, Աստծո կամքով, կկազմենք նոր քարտեզներ»:

Հ. Չ.

Տասը անուն տեխնիկա ՀԲԸՄ-ից Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին

Որով կթվայնացվի հայտնի եւ անհայտ ամբողջ ինֆորմացիան

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին 3 միլիոն 388 հազար դրամի տասը անուն տեխնիկա նվիրեց, որով այսուհետեւ թանգարան-ինստիտուտի աշխատակիցները կկարողանան թվայնացնել Հայոց ցեղասպանությանը վերաբերող ոչ միայն արդեն հայտնի նյութը, այլեւ դեռեւս անհայտ եւ չուսումնասիրված տեղեկատվությունը: Այս մասին երեկ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում տեղեկացրեց թանգարան-ինստիտուտի տնօրեն **Հայկ Դեմոյանն** ու հիշեցրեց, որ անկախության առաջին տարիներին՝ 1995-ին, Բարեգործականն օգնել է նաեւ թանգարան-ինստիտուտի կառուցման գործում:

Հայկ Դեմոյանն ընդգծեց, որ թանգարան-ինստիտուտը բավական նախագծեր ունի, որոնք կնպաստեն նաեւ Հայոց ցեղասպանության միջազգայնացմանը: Բայց այդ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ էր համակարգչային տեխնիկա, կրիչներ, սկաներներ եւ տպիչներ: Թանգարան-ինստիտուտի տնօրենի խոսքով, Հայոց ցեղասպանությանն առնչվող հսկայական նյութ կա, որը պետք է թվայնացնեն, տեղադրեն իրենց կայքում. «Վերապրողների ձեռագիր հուշերն օր առաջ թվայնացնելու, նրանց ձայնագրությունները կրիչների վրա տեղափոխելու, ողջ ինֆորմացիան պահեստավորելու համար տեխնիկա էր պետք»:

Հայկական բարեգործական ընդհանուր միության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն **Աշոտ Ղազարյանը** նշեց, որ իրենք ուրախությամբ են օգնել թանգարան-ինստիտուտին: «Այն բոլոր փաստացի նմուշները, որ ունենք, կարեւոր է, որ թվայնացվեն եւ հանձնվեն ֆոնդային միավորներին: Ուրախ եմ, որ կարողացանք փոքրիկ միջոցներով կարեւորագույն գործ կատարել», ասաց Աշոտ Ղազարյանը:

Տես էջ 3

«Քաղաքական կամք ունենք 27 տոկոսով ավելացնելու հարկային եկամուտները»

Գագիկ Մինասյանը նաեւ համոզմունք հայտնեց Սերժ Սարգսյանի առաջին փուլով ընտրվելու առնչությամբ

2008-ի պետական բյուջեով նախատեսվում է էապես ավելացնել հարկային եկամուտները եւ համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)-հարկեր հարաբերակցությունը, հասցնելով 16,9 տոկոսի այս տարի նախատեսված 15,2 տոկոսի փոխարեն: Երեկ «Փաստարկ» ակումբում լրագրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ, անդրադառնալով եկող տարվա պետական բյուջեի մանրամասներին եւ առանձնահատկություններին, այս մասին ասաց Ազգային ժողովի բյուջետային եւ ֆինանսավարկային հանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասյանը:

Գագիկ Մինասյանը, բնորոշելով եկող տարվա պետական բյուջեի առանձնահատկությունները, անվանեց բարեփոխումների երրորդ փուլի առաջին բյուջե: Այն նաեւ սոցիալական լուրջ-խնդիր-է-լուծում, քանի որ նախատեսում է աշխատավարձերի 20 տոկոսով եւ թոշակների 60 տոկոսով բարձրացում: Նախատեսվում է նաեւ մարդկային կապիտալի (առողջապահություն, կրթություն, գիտություն) վրա արվող ներդրումների ավելացում, որը եկող տարի կկազմի բյուջեի 47 տոկոսը, եւ երկրի անվտանգության ծախսերի ավելացում, որը կկազմի բյուջեի ծախսերի 20,6 տոկոսը: Ինչ վերաբերում է ՀՆԱ-հարկեր 16,9 տոկոս ցուցանիշին, ապա ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահի հավաստմամբ, դրան պետք է հասնել երկու սկզբունքային մոտեցումներով՝ ստվերի դեմ պայքար եւ տնտեսական մրցակցության բարելավում: Փաստորեն, եկող տարի նախատեսվող 10 տոկոս տնտեսական աճի պարագայում հարկային մուտքերը պետք է աճեն 27 տոկոսով: «Մեր քաղաքական կամքը բավարար է այս նպատակներն իրականացնելու համար», հավաստիացրեց Հանրապետական կուսակցությունը ներկայացնող պատգամավորը:

Հակամրցակցային համաձայնությունների եւ գերիշխող դիրքի չարաշահումների մասին խոսելով, Գագիկ Մինասյանը հայտնեց, որ տնտեսական մրցակցության հանձնաժողովի հետ քննարկումներ են ընթանում օրենքի որոշ դրույթներ ավելի խստացնելու մասին, սակայն հրաժարվեց մանրամասներ բացահայտելուց: Ինչ վերաբերում է պարզեցված հարկին եւ նրա հետագա ճակատագրին, ապա ըստ բանախոսի, ընդունելու պահին դա համահունչ էր մեր տնտեսական զարգացումներին եւ նպատակ ուներ խրախուսելու փոքր բիզնեսը, սակայն այսօր արդեն խոչընդոտում է տնտեսական զարգացումներին եւ հնարավորություններ տալիս ստվերի ավելացման եւ հակամրցակցային համաձայնությունների համար: ԱԺ պատգամավորի կարծիքով, բոլոր տնտեսվարողները պետք է ունենան նույն հարկային բեռը, այլ բան է, որ փոքր բիզնեսը կարող է խուսափել որոշ վճարումներից:

Ընտրական գործընթացներն ինչպե՞ս կազդեն տնտեսության վրա եւ ի՞նչ կլինի պետական բյուջեի հետ, եթե իշխանափոխություն լինի: Այս հարցերից առաջինին պատասխանելով, Գագիկ Մինասյանը տեսակետ հայտնեց, որ տնտեսական զարգացումը էապես չի խաթարվի ընտրական գործընթացներով: Իսկ իշխանափոխության մասին հարցի առնչությամբ էլ, նա, նախ որպես իշխող քաղաքական կուսակցության ներկայացուցիչ, այն համոզմունքը հայտնեց, որ իրենց կուսակցության թեկնածու Սերժ Սարգսյանը կհաղթի նախագահական ընտրությունների հենց առաջին փուլում, ապա որպես տնտեսագետ ասաց, որ բյուջեն հիմնավորված է եւ որեւէ քաղաքական ուժ այստեղ չի կարող արկածախնդրության գնալ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

Բացվեց ճարտարապետական աշխատանքների մրցույթ-ցուցահանդեսը

«Տարվա նախագիծ եւ կառույց-2007» ազգային մրցույթ-ցուցահանդեսը երեկ բացվեց ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում: Ներկայացված էին 60 ճարտարապետների 30 աշխատանքներ: Այս մասին լրագրողներին հայտնեց Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանը: Նա նաեւ հայտնեց, որ կան ինչպես նախագծային վիճակում գտնվող գործեր, այնպես էլ կյանքի կոչված նախագծեր, օրինակ, «Մոսկվայի տունը»: Լինելու են 6 անվանակարգեր, որոնց հաղթողները կստանան պատվոգրեր: Ճարտարապետների միության նախագահի հավաստմամբ, ցուցահանդեսը նախադեպ կդառնա, որպեսզի մեր ճարտարապետները մասնակցեն նաեւ միջազգային ցուցահանդեսների:

Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի տնօրեն **Աշոտ Գրիգորյանը** բացելով մրցույթ-ցուցահանդեսը տեղեկացրեց, որ այն կազմակերպվել է քաղաքաշինության նախարարության, ինչպես նաեւ ճարտարապետների եւ շինարարների միությունների ու թանգարանի կողմից: Իսկ քաղաքաշինության նախարար **Վարդան Վարդանյանը** ընդգծեց, որ մեր համախառն ներքին արդյունքում շինարարության մեծ մասնաբաժինը պարտավորեցնում է կառուցել ավելի շատ եւ ավելի որակով:

Ա. Մ.



Հարուցվել է քրեական գործ՝ հարկերից, տուրքերից խուսափելու համար

ՀՀ ոստիկանության ինտերնետային էջից տեղեկանում ենք, որ «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ից խանութներին եւ սննդի օբյեկտներին առաքված ոչ բոլոր խմբաքանակների համար են լրացվել հաշիվ-ապրանքագրեր, իսկ առաքման գրքերում գրանցվել է միայն հաշվապահական ձեւակերպումով քանակը: Ստուգումների ընթացքում իրավապահներն ընդամենը 3 վարորդ առաքիչների մոտ եղած սեւագիր մատյանների հիման վրա կատարած հաշվարկներով կարողացել են պարզել, որ վերջիններս 2007-ի ընթացքում իրականում իրացրել են մոտ 166 միլիոն դրամի պատրաստի արտադրանք, իսկ առաքման գրքերում հաշվառված է ընդամենը 25 միլիոն դրամ, հաշվառումից եւ հարկումից թաքցնելով 141 միլիոն դրամ: Փաստորեն, «Բջնի» հանքային ջրերի գործարանը» հաշվապահորեն ձեւակերպել է իրացված քանակության ոչ ավելի, քան 15 տոկոսը: Իսկ առեւտրի կետերի եւ սննդի օբյեկտների ստուգումներից պարզվել է, որ 2007-ին երեք վարորդ-առաքիչները իրացրել են մոտ 99 միլիոն դրամի չհաշվառված եւ չգրանցված հանքային «Բջնի» եւ «Նոյ» ջուր: Պարզվել է նաեւ, որ «Նոյը» շշալցվել է Զարենցավան քաղաքի ընդհանուր ջրամատակարարման ցանցի քլորացված ջրից, ոչ թե շշի պիտակի վրա նշված՝ Ալափարսի բնական աղբյուրից: Փաստորեն, այսքան ժամանակ գնորդը վճարել է ոչ թե բնական աղբյուրի, այլ սովորական ծորակի ջրի համար: «Միաժամանակ հիմնավորվել է, որ իրացված արտադրանքի իրական ծավալները թաքցնելու նպատակով «Բջնի» հանքային ջրերի գործարան» եւ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ միջեւ 2002-ի ապրիլի 1-ին կնքված ջրամատակարարման եւ ջրահեռացման պայմանագրում նշված են նույն ծավալները, ինչ 2004-07-ին: Այդ ընթացքում գործարանին մատակարարվել է 225503 խմ ջուր կամ 2255503000 լիտր եւ նույն ժամանակահատվածում գործարանի ջրահեռացման ծավալը կազմել է կրկին 225503 խմ, այսինքն՝ ջրամատակարարի մատակարարած ջրի ամբողջ ծավալը հեռացվել է գործարանի միջոցով: Այստեղ հարց է առաջանում, թե տարիներ շարունակ ինչո՞վ է շշալցվել «Նոյը» եւ գնորդը ի՞նչ է խմել: Ոստիկանության կայքէջը բերում է եւս մեկ փաստ՝ 1000 լիտր ջրի համար «Բջնի» հանքային ջրերի գործարանը» վճարել է 115 դրամ, իսկ 1,5 լիտրանոց պլաստիկե շշով «Նոյը» խանութներին է հանձնվել 155 դրամով, 0,5 լիտրանոցը՝ 115 դրամով: Նույնիսկ եթե հաշվի առնենք, որ պլաստիկե շշի արտադրության ինքնարժեքը, տեղափոխման եւ այլ ծախսերն ահռելի գումարներ են կազմում, ստիպված ենք արձանագրել, որ մեկ լիտր «Նոյի» վաճառքի արժեքը մի քանի հարյուր անգամ գերազանցում է ինքնարժեքին: Գանձվող հարկերը, տուրքերը վճարելուց խուսափելու փաստերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 2054 հոդվածի հատկանիշներով հարուցվել է քր. գործ: Նախաքննությունը շարունակվում է:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Կարգալույծ է հռչակվել եւս մեկ հոգեւորական

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Վազգեն վրդ. Նանյանը: Հայրապետական վճռի համար հիմք է ծառայել Վազգեն վարդապետի՝ հոգեւոր ծառայությունը թողնելու դիմումը:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետեւ կդասվի աշխարհականների շարքը՝ Բաբկեն Նանյան ավազանի անունով:

Մեր իսկ համեստ դիտարկմամբ, կարգալույծ լինելու յուրաքանչյուր փաստ նման է դասալքության, որ առավել համեստ է դարձնում մեր եկեղեցու ջանքերը՝ փրկելու աղանդավորության թիրախ դարձած հայ ժողովրդին: Ա. Մ.

Քաղաքական պայքարի սրությունն աննախադեպ է այս ժամանակաշրջանի համար

Համոզված է ԵՄԱ նախագահ Բորիս Նավասարդյանը

«Այսօր հայաստանյան եթերում ահավոր բաներ են կատարվում, եւ եթե անգամ քարոզարշավը նորմալ անցկացվի, չի փոխհատուցի այն վնասը, որն այսօր է հասցվում: Մեր հասարակության մեծ մասը հիմա է կողմնորոշվում եւ նրանց ազատ կամքի վրա այդպիսի ուժեղ քարոզչամիջոցով բռնանալն ուղղակի անթույլատրելի է», երեկ «Ուրբաթ» ակումբում քարոզչության նախորդող ժամանակաշրջանում հեռուստաընկերությունների աշխատանքն այսպես գնահատեց Երեւանի մամուլի ակումբի (ԵՄԱ) նախագահ Բորիս Նավասարդյանը:

«Թիմ» հետազոտությունների կենտրոնը Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի եւ Երեւանի մամուլի ակումբի հետ հայաստանյան 8 հեռարձակող լրատվամիջոցների դիտարկում է անցկացնում՝ պարզելու նրանց մոտեցումները նախաքարոզչական շրջանում: 7 հեռուստաընկերությունների եւ Հանրային ռադիոյի հոկտեմբեր ամսվա դիտարկման արդյունքները երեկ ակումբում ներկայացնելիս Բորիս Նավասարդյանն ընդգծեց. «Քաղաքական պայքարի սրությունն աննախադեպ է այս ժամանակաշրջանի համար»: ԵՄԱ նախագահի խոսքով, նախաքարոզչական այս շրջանը նախորդ ընտրությունների հետ համեմատելիս, հեռարձակողների այս շրջանի աշխատանքում նահանջ է, որը համեմատելի է 1996-ի եւ 1998-ի ընտրությունների հետ:

Բորիս Նավասարդյանի գնահատմամբ, հեռարձակվող լրատվամիջոցներում միակողմանի հաղորդակցություն է՝ միմյանց ուղղված ներկա եւ նախկին իշխանությունների հայտարարություններն են տրվում, բայց դրանց վերաբերյալ որեւէ մեկնաբանություն ստանալու հնարավորություն լրատվամիջոցները չունեն. «Փորձե՞լ եք, օրինակ, հարցազրույց վերցնել Լեւոն Տեր-Պետրոսյանից»: Նախկին եւ ներկա բեւեռների հակադարձումները, ակումբի հյուրի խոսքով, խանգարում են նախագահական ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած մյուս թեկնածուներին, որոնք կարծես չեն երեւում այդ երկուսի արանքում: ԵՄԱ նախագահը նախաքարոզչական հիշյալ շրջանը համեմատեց 1996-ի հետ այն իմաստով, որ այժմ հեռուստաընկերությունները Լեւոն Տեր-Պետրոսյանին այնպես բացասաբար են լուսաբանում, այնպիսի գրոհ է, ինչպես ժամանակին Վազգեն Մանուկյանի նկատմամբ էր:

Բորիս Նավասարդյանն ընդգծեց, որ բուն քարոզչության ժամանակ հնարավոր է, որ հեռուստաընկերությունները նորմալ լուսաբանեն բոլոր ուժերին՝ եվրոպական դիտորդներին հաճոյանալու համար, սակայն դա չի փոխհատուցելու այսօր հասցված վնասը, քանի որ ընտրազանգվածի մեծ մասը հենց հիմա է կողմնորոշվում: Իսկ հենց հիմա, ըստ «Թիմ» կենտրոնի ուսումնասիրության, պատկերը հետեւյալն է:

Ութ լրատվամիջոցների եթերում 19 գործիչների լուսաբանումից ամենամեծ մասնաբաժինը վարչապետ, ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանինն է՝ 706 հիշատակում, երկրորդ տեղում Լեւոն Տեր-Պետրոսյանն է՝ 341 հիշատակում, այնուհետեւ Վարդան Օսկանյանը՝ 225, Վահան Հովհաննիսյանը՝ 204, Գագիկ Ծառուկյանը՝ 133: Ուշագրավ է, որ Սերժ Սարգսյանի մասին խմբագրական լուսաբանումներում ընդամենը 2 բացասական հիշատակում կա, որը «հանդգնել են» կատարել «ԱԼՄ» եւ «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունները: «Նույն հաջողությամբ» Լեւոն Տեր-Պետրոսյանի վերաբերյալ արձագանքներում դրական են միայն 6 հիշատակում, մնացյալը բացասական են կամ չեզոք:

Բորիս Նավասարդյանի խոսքով, հեռարձակողների ուշադրության կենտրոնում հիմնականում Սերժ Սարգսյանը, Լեւոն Տեր-Պետրոսյանն ու Գագիկ Ծառուկյանն են: Գագիկ Ծառուկյանի օգտին եղած դրական հեռարձակումները, բանախոսի համոզմամբ, վկայում են, որ Գ. Ծառուկյանին պասիվ դեր չի վերապահված առաջիկայում: Ինչ վերաբերում է Սերժ Սարգսյանին, նա հիմնականում հանդես է գալիս որպես վարչապետ, սակայն տալիս է նաեւ քաղաքական գնահատականներ, ինչն անմիջականորեն կապվում է նախագահի թեկնածու լինելու հետ:

Բորիս Նավասարդյանը նշեց, որ Հանրային հեռուստատեսությունն իրավունք չունի իր լուսաբանումներում գերակայությունը տալու որեւէ գործչի, այլ պետք է բոլորին հավասարապես անդրադառնա: «Այսօր Հանրային հեռուստառադիոընկերությունը պետություն է պետության մեջ եւ պատասխանատու չէ ոչ մեկի առաջ: Ճիշտ է, օրենքն ասում է, որ նրան վերահսկում է հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը, սակայն չի ասվում՝ ինչպիսի մեխանիզմներով», ասաց ԵՄԱ նախագահն ու հավելեց, որ նախագահական աշխատակազմի վերահսկողությունից հեռուստաընկերությունները հանելու համար հարկավոր է սկսել կարգավորող մարմիններին առավել անկախություն ընձեռելուց:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԶ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ԹԱԹՈՒԼ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն
/ հեռ 529353
Համակարգչային շարվածքը
«Ազգ»-ի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Ալեքսանդր Արզումանյանի երկու տարբեր Հայաստանները

Եթե մինչ այս ՀՀԸ-ն երկրի իրականությունը բաժանում էր 1998 թվականով, ապա այսօր արդեն բաժանում է 2007-ի սեպտեմբերի 21-ով: Վերջին ամսաթվից առաջ ընկած ժամանակահատվածը ՀՀ նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանի քաղաքական ընդդիմության եւ հասարակության հուսալքված ու հիասթափված լինելու ժամանակահատվածն էր, իսկ հետո պատկերը այլ է, գրեթե հակառակը: Չէ՞ որ 2007-ի սեպտեմբերի 21-ին լռությունն ընդհատել ու ելույթ էր ունեցել ՀՀ առաջին նախագահը: «Ես կարծում եմ, որ այսօրվա եւ երկու ամիս առաջվա Հայաստանները երկու տարբեր Հայաստաններ են: Ընդդիմությունը կարծես թե այլեւս անելիք չուներ: Հասարակությունն էլ արդեն գիտակցելով, որ ընդդիմությունը որերորդ անգամ նույն փոցխի վրա կանգնում ու սպառնում է հետեւել իրեն, կարեւորեց Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը, որից հետո քաղաքական դաշտ ստեղծվեց, ակտիվացավ Հայաստանում: Ինչ-րից մտցվեց քաղաքական դաշտում», կարծիք հայտնեց Ալեքսանդր Արզումանյանն ու ընդգծեց, որ դրա համար հասարակությունն ու ընդդիմությունը պետք է շնորհակալություն հայտնեն ԼՏՊ-ին, քանի որ քաղաքական ընդդիմությանը «գողի» վիճակից դուրս է բերել, հասարակությանն էլ հույս ներշնչել: Հետո չզլացավ «Ազդակ» ակումբի երեկվա բանախոսն ընդգծել, որ ԼՏՊ-ից ներողություն պահանջելն անտեղի է. «Թող Աստծո գործառույթներն իր վրա չվերցնի ոչ ոք»:

Նախկին եւ ներկա նախագահների տարբեր ընկալումները գործիքների առնչությամբ

Նոյեմբերի 21-ին Գյումրիում Ռոբերտ Քոչարյանը հեռակա կերպով պատասխանել էր հանուն Սերժ Սարգսյանից եւ Ռոբերտ Քոչարյանից ազատվելու գործիք դառնալու Լեւոն Տեր-Պետրոսյանի հրապարակային համաձայնության առաջարկին՝ ասելով. «Գործիքը երկար չօգտագործվելուց ժանգոտում է, բարոյապես մաշվում»: Ալեքսանդր Արզումանյանը հակադարձեց երեկ. «Մարդ կա ասում է գործիք, հասկանում, կռվալը, ռազվոդնոյ կլյուչ, մարդ էլ կա՝ ընդհանրապես պետությունը գործիք է համարում ազգի ձեռքում, որպեսզի կարողանա ազգի առջեւ ծառացած խնդիրները լուծել: Սեւակ կարդացած լինեք՝ կիմանաք, որ մուրճը ստեղծվել է բռունցքի ձեւով: Դրա համար եմ ասում, ցավալի է, որ որոշ մարդկանց կրթական ցենզը չի համապատասխանում ոչ միայն պաշտոնավարելու, այլեւ հրապարակային ելույթներ ունենալու համար: Այնպես որ, մարդ կա, որի ուղեղն է գործիք, մարդ էլ կա, որ ժանգոտած ռազվոդնոյ կլյուչից դենը որեւէ գործիք չի տեսել»: Անկախ գործիքի տեսակից, դրա միայն ու միայն ի բարօրություն օգտագործումն է գնահատելի՝ ուղեղ կլինի, թե ռազվոդնոյ կլյուչ, գլխում կլինի, թե ձեռքին:

Հեռուստաեթեր չեն տրամադրի՝ DVD կտարածենք

Հայաստանյան հեռուստաեթերը փակ է առաջին նախագահի համար: Հետեւաբար նրա համախոհները, թիմակիցները այլընտրանք են փնտրում, եւ ըստ Ալեքսանդր Արզումանյանի, արդեն գտել են մեկը. «Զանգվածային հանրահավաքներ հրավիրել, DVD-ներով տարածել: Ոմանք արդեն դա կոչում են DVD-ների հեղափոխություն: Բավականին բարեհունչ անվանում է, սակայն հեղափոխություն բառը մենք այդքան էլ չենք նախընտրում, ընդամենը ուզում ենք Հայաստանը վերադարձնել իր նախորդ հունին, այսինքն՝ ժողովրդավարական ճանապարհի վրա կանգնեցնել»: Այնուհետեւ Ալեքսանդր Արզումանյանը հայաստանյան մամուլի տարածած լուրը ԼՏՊ-ի Ռուսաստան մեկնելու մասին տեղեկություն չհամարեց՝ հստակեցնելով. «Տեղեկություն է կոչվում այն, որը պաշտոնապես տրամադրում է Լեւոն Տեր-Պետրոսյանի գրասենյակը, մնացածը խոսակցություններ են, աբսուրդ, այդ թվում եւ այն, թե Տեր-Պետրոսյանը պատրաստվում է կրկնել Սերժ Սարգսյանի՝ Մոսկվա, Վաշինգտոն, Փարիզ երթուղին: Լեւոն Տեր-Պետրոսյանն առաջադրվել է ՀՀ նախագահի եւ խնդիր ունի հարաբերվելու իր ժողովրդի հետ, եւ Հայաստանի քաղաքացիներն են, որ պետք է ընտրեն նախագահի»: Հարաբերման այս փուլի առանցքային ձեւը՝ հանրահավաքների կազմակերպումը մինչեւ տարեվերջ գոնե մեկ անգամ վստահաբար օգտագործվելու է, ինչպես տեղեկացրեց բանախոսը:

Սո՞ւտ, այն էլ լկտի՞

Որ ԼՏՊ-ն երբեւէ համաձայնել է ԼՂՀ-ն տեսնել Ադրբեջանի կազմում որպես ինքնավար հանրապետություն, ըստ Ալեքսանդր Արզումանյանի, լկտի սուտ է, ուրիշ ոչինչ: Սա էլ վարչապետ Սերժ Սարգսյանի այն գնահատական-եզրակացության պատասխանն է, թե գուցե երեք տարին Տեր-Պետրոսյանին բավարար է Ղարաբաղը հանձնելու համար: «Սա լկտի ստախոսություն է, որը բազմիցս կրկնվել է ՀՀ-ի եթերում, ամենաբարձր պաշտոնյաների կողմից: Ես նորից եմ ասում, գնացեք եւ նույն Վարդան Օսկանյանից պահանջեք, որ ձեզ ներկայացնի որեւէ փաստաթուղթ, որում Ղարաբաղը նշված է որպես ավտոնոմիա: Նման բան գոյություն չունի, եւ նման զրպարտանքներն այսօր տարածողները, կարծում եմ, ժամանակին պատասխան են տալու արդարադատության առաջ», առաջարկեց Ալեքսանդր Արզումանյանն ու հայտարարեց, թե Տեր-Պետրոսյանի տեսակետները հայտնի են 1997 թվականից եւ հրապարակված են անգլերեն, ռուսերեն:

Թող գան թիմով ու թարգմանչի հետ

Նախկին նախագահի շուրջը համախմբվելու մյուս քաղաքական ուժերի դիրքորոշումը, համաձայն Ալեքսանդր Արզումանյանի, պաշտոնապես չի ներկայացվել, եւ այդ պատճառով էլ արձագանքել չցանկացավ արդեն ասվածին ու հարկ համարեց ընդգծել. «Եթե համարձակություն ունենա Սերժ Սարգսյանը, ուղիղ եթերում բանավեճի կհրավիրի Տեր-Պետրոսյանին: Սակայն նախապես պետք է որոշել լեզվի խնդիրը կամ գալ ողջ թիմով ու թարգմանիչ էլ բերել, քանզի Տեր-Պետրոսյանի հայերենը այնքան բարձրակարգ է, որ որոշների կարող է անհասկանալի մնալ»: Հայոց լեզվի իմացությամբ էլ չափեց բանախոսը երկու կողմերի գործունեության արդյունքները, մոռանալով, որ եթե միայն մեր՝ հայոց պատմությանը անդրադառնալու լինենք, վստահաբար, այդ չափանիշի անբավարար լինելու լրջագույն փաստարկումներ կգտնենք:

ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վանաձորում պատահարից զոհվել են երկու, վիրավորվել 8 մարդ

Ինչպես տեղեկացանք ՀՀ ոստիկանության Լոռու մարզի վարչությունից, նոյեմբերի 22-ին, ժամը 00.30-ին Վանաձորի շտապ բուժօգնության կայանից հաղորդել են, որ Վանաձորի Տիգրան Մեծի պողոտայի եւ Մյասնիկյան փողոցի խաչմերուկում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, որի հետեւանքով կան տուժածներ:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ նոյեմբերի 22-ին, ժամը 00.20-ի սահմաններում Տիգրան Սիմոնի Դավթյանի (ծնվ. 1989-ին) վարած «BMW-325» մակնիշի 22LU404 պետհամարանիշի ավտոմեքենան բախվել է Վանաձորի շտապ օգնություն կայանի ՈւԱԶ մակնիշի 263SU36 պետհամարանիշի ավտոմեքենային, որի հետեւանքով շտապ օգնության մեքենան շրջվել եւ հրդեհվել է: Շտապ օգնության մեքենայի վարորդ Սեյրան Սուրենի Դալլաքյանը (ծնվ. 1951-ին) եւ բուժքույր Ալվինա Եղյանը (ծնվ. 1950-ին) տեղում մահացել են: Նշված ավտոմեքենայի մեջ գտնվող Մանե Կարենի Ալավերդյանը (ծնվ. 1983-ին), նրա ամուսինը՝ Արտակ Գալուստի Մելիքյանը (ծնվ. 1983-ին), ամուսնու հայրը՝ Գալուստ Խաչատուրի Մելիքյանը (ծնվ. 1956-ին), ամուսնու մայրը՝ Անահիտ Լեոնդրոսի Մելիքյանը (ծնվ. 1957-ին) եւ BMW մակնիշի ավտոմեքենայի ուղեւորներ Նարեկ Սամվելի Հարոյանը (ծնվ. 1990-ին), Սպարտակ Կարենի Բաղրամյանը (ծնվ. 1989-ին), Սուրեն Բեկչյանը (ծնվ. 1988-ին), վարորդ Տ. Դավթյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր:

Դեպքի վայր են մեկնել Լոռու մարզի դատախազ Կարեն Շահբազյանը, ոստիկանության Վանաձորի բաժնի պետ Անուբախ Համբարյանը, Լոռու մարզի քննչական բաժնի պետ Գագիկ Իսպիրյանը:

Դեպքի հանգամանքները եւ դրա հետեւանքով տուժածների տվյալները, BMW մակնիշի ավտոմեքենայի պատկանելությունը ճշտվում են: Կատարվում է նախաքննություն:

Ինչպես տեղեկացանք Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիրի տնօրեն Մհեր Մարգարյանից, տարբեր տեսակի ծանր վնասվածքներով հիվանդանոց տեղափոխված Անահիտ Մելիքյանը եւ Սուրեն Բեկչյանը առաջին օգնություն ստանալուց հետո նույն գիշեր տեղափոխվել են Երեւան, իսկ Գալուստ Մելիքյանը Երեւան է տեղափոխվել նոյեմբերի 22-ին, ժամը 15-ի սահմաններում: Արտակ Մելիքյանը բուժօգնություն ստանալուց հետո դուրս է գրվել հիվանդանոցից: Միջին կայուն վիճակում է Տիգրան Դավթյանը, որը ստացել է գլխուղեղի ցնցում եւ տարբեր կոտրվածքներ: Կոտրվածքներ ունի նաեւ Սպարտակ Բաղրամյանը, իսկ Նարեկ Հարոյանը՝ միայն ուղեղի ցնցում: Այրվածքներ եւ մի քանի տեսակի կոտրվածքներ է ստացել 34-35 շաբաթական հղիություն ունեցող Մանե Ալավերդյանը, ում վիճակը նույնպես կայուն է, պտուղը չի վնասվել, ստանում է համապատասխան բուժում:

ՄԱՆՎԵԼ ՄԽԻԹՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

- Ժամը 10.30-ին մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում տեղի կունենա մամուլի ասուլիս:
- Ժամը 12.00-ին «Հայելի» ակումբում կհյուրընկալվեն Էդուարդ Շարմազանովը եւ Ալեքսանդր Իսկանդարյանը:
- Ժամը 12.00-ին կառավարության նիստերի դահլիճում տեղի կունենա «Դաշինք» կուսակցության համագումարը:
- Նույն ժամին «Տեսակետ» ակումբում կկազմակերպվի Ալբերտ Բազեյանի եւ Արշակ Սադոյանի մամուլի ասուլիսը:
- Մեկ ժամ անց «Հայացք» ակումբում լրագրողները կհանդիպեն Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտի փոխտնօրեն Սերգեյ Մինասյանի եւ Հրազդան Մադոյանի հետ:
- Ժամը 13.00-ին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքում տեղի կունենա ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Գառնիկ Անանյանի վերջին հրաժեշտի արարողությունը:
- Նույն ժամին Ազգային գրադարանի գիտական 1-ին ընթերցասրահում տեղի կունենա Էդգար Ավագյանի 80-ամյակին նվիրված միջոցառում:
- Ժամը 13.00-ին «Տեսակետ» ակումբում տեղի կունենա Լեւոն Մելիք-Շահնազարյանի մամուլի ասուլիսը Բաքվում թուրքալեզու պետությունների հավաքի մասին:
- Ժամը 14.00-ին առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Ներսես Երիցյանը կհանդիպի Տուֆթսի հայկական ինստիտուտի ուսանողների եւ դասախոսների հետ:
- Ժամը 14.00-ին Ազգային գրադարանի նիստերի դահլիճում տեղի կունենա Աշոտ Աշոտյանի գրքի շնորհանդեսը:
- Իսկ ժամը 15.30-ին նույն տեղում կկազմակերպվի Կոմիտասի երկերի ժողովածուների 14 հատորների շնորհանդեսը:
- Ժամը 15.00-ին «Սթար-Սիթի» խանութ սրահում տեղի կունենա Արմեն Աշոտյանի սկավառակի շնորհանդեսը:
- Ժամը 16.30-ին ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի 1-ին հարկում տեղի կունենա լսարանի բացում:
- Ժամը 17.00-ին ԵՊՀ 2-րդ հարկի դահլիճում տեղի կունենա հուշ-երեկո նվիրված ազատագրական բանակի հրամանատար Լեոնիդ Ազգալդյանի 65-ամյակին:
- Ժամը 18.00-ին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանում մամուլի ասուլիս՝ հայագիտության խնդիրները թեմայով:
- Նույն ժամին Դեղատան փողոցի 15/1 հասցեում տեղի կունենա ֆրանս-հայկական դպրոցի պաշտոնական բացումը:
- Ժամը 19.00-ին Սունդուկյանի անվան թատրոնում նշվելու է «Մարաթուկ» ազգային երգի, պարի համույթի ստեղծման 25-ամյակը:

ՆԻԿՈՍԻԱ

Խտրականությունը վերացնելու մրցույթում 4 կիպրահայեր մրցանակակիր

«Բոլորին հավասար հնարավորությունների եվրոպական տարի» միջոցառման շրջանակներում Եվրոհանձնաժողովի փոխնախագահ Ֆրանկո Ֆրատինիի նախաձեռնած ցուցապաստառի (պլակատ) ձեւավորման մրցությանը մասնակցած չորս կիպրահայ երիտասարդներ «Նարեկ» հայկական գիմնազիայից արժանացել են խմբական առաջին մրցանակի, տեղեկացնում է Նիկոսիայից «Ազգի» հատուկ թղթակից Ջորջ Տեր-Բարթողը: «Եվրամիությունը եւ անխտրականությունը» վերնագրով անցկացված մրցությունը նպատակ է ունեցել իրազեկելու եվրոպացիներին խտրականության դեմ աշխատանքների մասին: Մասնակցել են 12-18 տարեկան պատանիներ եւ պարմանուհիներ, որոնց թվում են եղել Անտոնիա Հովսեփյանը, Արմենուհի Սեմերջյանը, Հրաչյա Գարգալյանը եւ Դիմիտրիս Հաջիքրիստոդուլուն (որի մայրն է հայ):

Տեղական մրցույթում առաջին տեղը գրաված այս չորս կիպրահայերը, ըստ հաղորդագրության, մասնակցելու են եվրոպական մակարդակով մրցույթի երկրորդ փուլին, առաջին երեք տեղերը գրաված խմբերը դեկտեմբերի կեսերին Բրյուսելում ներկա են լինելու փոխնախագահ Ֆրատինիի մրցանակաբաշխության արարողությանը:

Հետագայում մրցանակի արժանացած ցուցապաստառները օգտագործվելու են մարդկանց հանդեպ խտրական վերաբերմունքը վերացնելու քարոզարշավներում:

Հ. ՉՈԼԱՔՅԱՆ

Տասը անուն տեխնիկա ՀԲԸՄ-ից Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին

1-ին էջից

Թանգարան-ինստիտուտի տնօրենը տեղեկացրեց, որ ամեն տարի Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեղեկությունների նոր աղբյուրներ են հանդես գալիս՝ ձեռագիր նմուշ, անհայտ լուսանկար, իրեղեն նյութ կամ առարկա: Ցեղասպանության թանգարան-ինստիտուտն արդեն մեկ տարի ղեկավարող երիտասարդ, բայց պատրաստված տնօրենին անակնկալի է բերել հանգամանքը, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ աղբյուրներ եւ դեռեւս չուսումնասիրված նյութեր կան: Մեկ տարվա ընթացքում թանգարան-ինստիտուտի տնօրինությունը փորձել է տարբեր հասցեներով պարզել, թե որտեղ ինչ նյութ կա, եւ առաջիկայում պատրաստվում են գործուղվել Եվրոպա, Ռուսաստան, Մերձավոր Արեւելք: Հայկ Դեմոյանը խոստացավ ձեռք բերված նոր նյութերի հիման վրա առաջիկա տարիներին հայեցակարգային՝ առումով թանգարանային նոր ցուցադրություն կազմակերպել: Մոտակա ամիսներին թանգարան-ինստիտուտը կտպագրի 10 հատոր նոր մենագրություն, որտեղ կլինեն նոր թարգմանություններ:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի թուրք այցելուների պահվածքը, Հայկ Դեմոյանի գնահատմամբ, շատ հետաքրքրական է. «Շատ են գալիս երիտասարդները՝ 20-30 տարեկանները: Հետաքրքրական է տեսնել՝ ինչպես են նրանք փորձում արդարանալ, ինչպես են փորձում փախչել այդ իրականությունից»:

Թանգարան-ինստիտուտի տարածքը բավական բարեկարգվել է: Նոյեմբերի 27-ին կնշվի Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կառուցման 40-ամյակը, որի առիթով կկազմակերպվի երկօրյա գիտաժողով: Ինչ վերաբերում է թանգարան-ինստիտուտի տարածքին, Հ. Դեմոյանի խոսքով, իրենց շրջայցից պարզվել է, որ տարածքում հին շրջանի քաղաք կա. «Հայտնաբերվել են դամբարաններ, պեղումներ ենք անելու, բայց գտածոն իսկ արդեն հետաքրքրական է»:

Հարցազրույց «Ազգային տնտեսության առաջնորդ. Մոսկվա-2007» մրցանակակիր, «Գյումրի» եւ «Ձովաշեն» ՀԷԿ-երի գլխավոր տնօրեն տիկին Նաիրա Նահապետյանի հետ

- Տիկին Նահապետյան, Ձեր ընկերությունը՝ «Ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի անվան Գյումրի ՀԷԿ»-ը նոյեմբերի 8-ին Մոսկվայում կայացած ԱՊՀ երկրների երկրորդ միջազգային գագաթաժողովում արժանացավ «Ազգային տնտեսության առաջնորդ. Մոսկվա-2007» մրցանակին: Միջազգային այս հեղինակավոր խորհուրդը ինչպե՞ս ընտրեց Ձեր ընկերությանը, քանի որ, ինչպես մեզ հայտնի է, ընտրությունն անցկացվում է մի քանի փուլով եւ վերջնական փուլ անցած ընկերությունը կամ կազմակերպությունն է ներկայացվում մրցանակի:

- Այո, Դուք ճիշտ եք: Ընտրությունը կատարվում է մի քանի փուլով, եւ «Գյումրի ՀԷԿ»-ի ընտրությունը մեզ համար հաճելի անակնկալ էր: Այս ՀԷԿ-ը ունի շատ հին պատմություն, կառուցվել է Խորհրդային Միության առաջին տարիներին՝ 1928-ին ԳՈԷԼՌՈ-ի ծրագրով: Սակայն երկրաշարժից հետո կայանը, ըստ էության, չէր գործում եւ գնալով քայքայվում էր: Եվ միայն 1997-ին՝ երկրաշարժից 10 տարի անց, անգործության մատնված այս կայանը վաճառից հետո, մեր մեծածավալ աշխատանքների շնորհիվ վերագործարկվում է: Այսօր ՀԷԿ-ը աշխատում է իր ողջ հզորությամբ: Ասեմ նաեւ, որ այս մրցանակը առաջինը չէր «Գյումրի ՀԷԿ»-ի համար: 2001-ի դեկտեմբերի 23-ին ՀԷԿ-ը արժանացել է «Արդյունաբերության աջակցման ֆրանսիական ասոցիացիայի» սահմանած ոսկե մեդալին եւ պատվոգրին: Այս ասոցիացիան 1801-ին հիմնել է Նապոլեոն Բոնապարտը, մրցանակը կոչվում է նրա անունով:

«Գյումրի ՀԷԿ»-ը հետաքրքրական ավանդույթներով հարուստ կայան է: Իր ստեղծման օրից՝ 1928-ից այստեղ աշխատող մասնագետների որդիները, հիմա էլ թոռները շարունակում են հայրերի սկսած գործը՝ աշխատում են այս կայանում: Մենք պատրաստվում ենք 2008-ին մեծ շուքով նշել «Ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի անվան Գյումրի ՀԷԿ»-ի 80-ամյակը:

- Տիկին Նահապետյան, հայտնի է, որ Ձեզ է պատկանում նաեւ «Ձովաշեն ՀԷԿ»-ը, որը եւս վերագործարկվել է Ձեր ընկերության շնորհիվ եւ այսօր համարվում է մեր հանրապետության լավագույն ՀԷԿ-երից մեկը:

- Այո, ես իսկապես կարող եմ ասել, որ «Ձովաշեն ՀԷԿ»-ը մեր ընկերության հպարտությունն է: Մենք այն գնել ենք 2001-ին: 1956-ին կառուցված այս փոքրիկ ՀԷԿ-ը 7 տարի անգործունյա էր եղել եւ հասել էր անմխիթար վիճակի: Փլատակների վերածված, թալանված ՀԷԿ-ը վերականգնվելուց հետո աշխատում էր ոչ լրիվ հզորությամբ: Այս տարի շատ մեծ աշխատանքներ կատարեցինք ՀԷԿ-ի վերազինման համար, գրվեց Ներդրումային ծրագիր, որը ֆինանսավորեցին էներգետիկայի բնագավառի զարգացման համար վարկեր տրամադրող գերմանական KFW եւ «Անելիք» բանկերը: Ի միջի այլոց, «Ձովաշեն ՀԷԿ»-ը առաջին կայանն է հանրապետությունում, որ ֆինանսավորվեց գերմանական KFW բանկից: ՀԷԿ-ին տրամադրված վարկը օգտագործվեց ոչ միայն նոր ագրեգատների ձեռքբերման, այլեւ ամբողջ կայանի վերանորոգման, ջրատարի, ջրավազանի վերականգնման համար: Կայանը վերաբացվեց գերմանական հեղինակավոր պատվիրակության մասնակցությամբ՝ դոկտոր Ռոլֆ Բալդուսի (Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության Հարավային Կովկասի եւ Միջին Ասիայի բաժանմունքի ղեկավար) գլխավորությամբ:

- Էներգետիկան ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ աշխարհում համարվում է կարեւորագույն ուղղություններից մեկը, նաեւ ռազմավարության առումով: Հիդրոէներգետիկան Հայաստանի տնտեսության մեջ այն ճյուղերից մեկն է, որը, կարելի է ասել, լրիվ հիմնված է տեղական ռեսուրսի վրա: Ձեր կարծիքով այսօր Հայաստանում ինչպիսի՞ն է ՀԷԿ-երի զարգացման դինամիկան:

- Եթե համեմատենք 1991-95 թթ. հետ, երբ հանրապետությունում կար ընդամենը 13 փոքր հիդրոկայան, ապա այսօր մեծ զարգացում է ընթացել, փոքր ՀԷԿ-երի թիվը՝ գործող եւ կառուցվող, հասնում է 70-ի, որոնք ապահովելու են հանրապետությունում արտադրվող էներգիայի 2-3 տոկոսը: Այսօր ամենուրեք գետերի, ջրամբարների, ջրավազանների վրա կառուցվում են փոքր ՀԷԿ-եր, այսինքն՝ փորձում ենք ճիշտ օգտագործել տեղական ջրային ռեսուրսները: Քանի որ նոր կառուցվող կայաններն այս ոլորտում դեռեւս անփորձ էին եւ հետագա գործունեության կայացման համար կային բազմաթիվ խնդիրներ, անհրաժեշտություն առաջացավ միավորելու բոլոր գործող եւ կառուցվող փոքր հիդրոկայաններն ու ստեղծելու մի միություն, որը կզբաղվեր նրանց խնդիրներով: «Փոքր հիդրոկայանների միությունը» ստեղծվեց 2001-ին, այդ տարիներին միության անդամներն էին ընդամենը մի քանի փոքր ՀԷԿ-եր, սակայն այս տարի ընդլայնվել է, այսօր արդեն նրան անդամակցում են 50-ից ավելի փոքր ՀԷԿ-եր: ՓՀԷԿ-երի միությունը գլխավորում է յոթ հոգուց կազմված խորհուրդը, որի կազմում եմ նաեւ ես: Միությունն ունի նաեւ ինտերնետային հասցե: Միության խնդիրն է համակարգել եւ լուծել մեր ոլորտում առաջացած խնդիրները, օգնել նոր կառուցվող ՀԷԿ-երին մեր ունեցած փորձով եւ մասնագետներով: Այսօր Հայաստանում շատ սուր է մասնագետների հարցը, չկան երիտասարդ կադրեր, որոնք ունենան նեղ մասնագիտական կրթություն: Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել այս խնդրին, եւ ՓՀԷԿ-երի միությունը փորձում է կազմակերպել դասընթացներ, որտեղ մեր մասնագետները կփորձեն երիտասարդ կադրերին տալ մասնագիտական որակավորում:

- Տիկին Նահապետյան, էներգետիկայի ոլորտում Դուք ոչ միայն երկու ընկերությունների գլխավոր տնօրենն եք, այլեւ սեփականատերը եւ միակ կինն եք, որ աշխատում է այս բնագավառում: Կնոջ համար դժվար չէ՞ Ձեր աշխատանքը:

- Ճիշտ է, էներգետիկան շատ ծանր բնագավառ է, բայց ես մենակ չեմ: Ինձ խորհուրդներով շատ է օգնում ամուսինս: Նա ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի թոռն է, եւ «Գյումրի ՀԷԿ»-ը կոչվում է հենց ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանի անունով: Ես երջանիկ կին եմ, քանի որ զբաղվում եմ սիրած գործով, ունեմ հուսալի ընտանիք՝ ամուսինս եւ դուստրերս ինձ օգնում ու սատարում են իմ ընտրած բնագավառում:

Գ.



«Ձովաշեն» ՀԷԿ-ը նախկինում եւ այսօր

ՄՈՍԿՈՎՅԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՎ ՄԵՐ ՆԱԽԱԳԱՀԱՑՈՒՆԵՐԸ

Եթե չհայտնվեն նոր դեմքեր

Եթե համեմատենք Հայաստանին ու Վրաստանին նվիրված հրապարակումները ռուսաստանյան ԶԼՄ-ներում, ապա քանակական առումով առաջինները կարելի է համարել հատուկենտ: Հատկապես մամուլը հեղեղված է Սաակաշվիլու եւ նրա ընդդիմախոսների գործողությունների վերաբերյալ բազմաբնույթ մեկնաբանություններով: Եվ դա բնական է, քանզի Ռուսաստանի եւ Վրաստանի հարաբերությունները կոնֆլիկտային են ու իրարամերժ, եթե խուսափենք «թշնամական» բառի օգտագործումից:

Ասել, թե այստեղ անվրդով են Հայաստանի իրադարձությունների զարգացման նկատմամբ, ճիշտ չի լինի: Որոշակի անհանգստություն նկատելի է Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ երկրի քաղաքական դաշտ անակնկալ ներխուժումից հետո: Պարզ է, իր տասնամյա լռությունը խախտելու համար Տեր-Պետրոսյանը լուրջ հիմքեր պիտի ունենար, եւ հենց այդ շարժառիթների վերլուծությունները դառնում են խոսակցության թեմա:

Հայաստանի ներկա ղեկավարության աքիլլեսյան գարշապարը երկրում ստեղծված բարոյահոգեբանական գաղջ մթնոլորտն է, եւ Տեր-Պետրոսյանը կարող է բազմաժամյա հրապարակային դասախոսություններ կարդալ ռեժիմի «հանցավոր ու թալանվող» էության մասին ու տպավորություն գործել հուսալքված լսարանի վրա: Սակայն արդյոք այդ մթնոլորտը շատ ավելի՞ վատն է նրա իսկ իշխանության տարիների կացությունից, հարցնում է թերթերից մեկը, երբ միտինգային պայծառ խոստումներից հետո երկիրը խորասուզվեց տնտեսական ու սոցիալական ճգնաժամի, էներգետիկ խավարի մեջ:

Այստեղ հակված են կարծելու, որ Տեր-Պետրոսյանը ոչ թե հենվում է հայաստանյան որեւէ ազդեցիկ ընդդիմադիր ուժի վրա, այլ գտնվում է արտաքին ներգործության շրջանակներում: Հազիվ թե ամերիկացիներին դուր գա, որ հախուռն Մերձավոր Արեւելքի հարեւանությամբ, ուղիղ Իրանի քթի տակ ռուսներն ունեն ռազմաքաղաքական հենարան: Եվ գոհ կլինեն, եթե Տեր-Պետրոսյանին հաջողվի որեւէ ձեւով խարխլել երկրի կայունությունը: Դա ձեռնտու կլինի և՛ արտաքին ուժերին, և՛ հենց իրեն՝ գահի նորընծա հավակնորդին: «Նախագահ Քոչարյանի գլխավոր խնդիրն է իր փոխանորդ Սերժ Սարգսյանին ժառանգություն թողնել հենց այդ կայունությունը, նշված է մի թողարկման մեջ, եւ եթե այդ փոխանցման ժամանակ տվյալ ժառանգությունը գոլորշիանա, ապա Սարգսյանը ընտրության ոչ մի շանս չի ունենա: Իսկ նման սցենար առավել քան հնարավոր է»:

Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ բուն Հայաստանի քաղաքական կյանքի կարեւոր բաղադրիչն է Ղարաբաղի խնդիրը: Այդ առնչությամբ վերհիշվում է Լեւոն Տեր-Պետրոսյանի «համակրանքը» Թուրքիայի նկատմամբ: Թեեւ հայտնի չէ, թե ինչ տվեցին Հայաստանին նրա սիրահետումները Դեմիրելի հետ: Կասկած է հայտնվում, թե ղարաբաղցիները կարող են որեւէ շփման գնալ նման դիրքորոշում ունեցող անձի հետ:

Քննության առարկա է եւս մի հանգամանք. ինչո՞ւ է Տեր-Պետրոսյանը պահանջում սոսկ երեք տարվա նախագահական ժամկետ, որից հետո կնշանակվեն նոր ընտրություններ: Արդարացիորեն արձանագրվում է, որ երեք տարում նա ոչ դյուրին վիճակից չի հանի էկոնոմիկան, բայց կարող է վերափոխել իշխանական կառույցները, արտաքին քաղաքական կողմնորոշիչները: Հովանավորներ կգտնվեն, ինչպես որ գտավ Սաակաշվիլին: Սակայն դեռ հարց է՝ շահե՞ց նա, որ շահի Տեր-Պետրոսյանը: Առհասարակ ուշադրություն է հրավիրվում այն տպավորության վրա, որ իշխանության գլուխ վերադառնալու վերջինիս մղումը արդյունք է ոչ թե իր երկրի ու ժողովրդի հանդեպ սիրո, այլ անձնական չարացածության եւ ռեւանշի հասնելու անհագուրդ ձգտման: Ըստ երեւույթին դրա համար տասը տարին բավական էր...

Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հետ հավասարակշռված հարաբերություններ պահպանելու Հայաստանի ներկա քաղաքականությունը սկզբունքային առարկության չի հանդիպում Մոսկվայում: Ուստի կարելի է ենթադրել, որ Սերժ Սարգսյանի թեկնածությունը գերադասելի կլինի ռուսների համար: Եթե, իհարկե, չհայտնվեն նոր «թարմ» դեմքեր:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Ռուսաստանի ամենահարուստ հայի կյանքից

Կարծես թե հայաստանյան մամուլն առանձնապես չի հրապուրվում մարդկանց «աշխարհիկ» կյանքով, չի մտնում նրանց անկողինը, չի ստեղծում երեւակայական տեսարաններ, արհեստական սկանդալներ եւ այլն: Եթե ես չեմ սխալվում, ապա դա հիանալի է:

Այլ է պատկերը Ռուսաստանում: Բուլվարային մամուլն այստեղ, կարելի է ասել, հսկա ինդուստրիա է իր պարարտ գրպանով ու ամենահաս շոշափուկներով: Նույնիսկ անբուժելի հիվանդությամբ տառապող «աստղին» չեն թողնում, որ հանգիստ կնքի իր մահկանացուն: Անգամ ամենալուրջ հրատարակությունները տեղ են թողնում ցածր բամբասանքին, մեղկություններին, հերյուրանքներին եւ այլն:

Ահա եւ վերջին սկանդալային պատմություններից մեկի հերոսը մեր հայրենակիցն է, ըստ «Ֆորբս» ամսագրի՝ Ռուսաստանի ամենահարուստ հայը, «Ռոսգոսստրախ» ապահովագրական ընկերության նախագահ Դանիլ Խաչատուրովը: Ոչ, այլ կերպ չի էլ կարող լինել, ամուսնալուծվում է եւ կինը պահանջում է նրա 1,3 միլիարդ դոլարանոց հարստության կեսը: Երկու կողմի փաստաբանները «հանգամանորեն» իրազեկում են գործի հանգամանքները եւ յուրաքանչյուրի շանսերը, փոխադարձ պահանջները, Խաչատուրովի նոր սիրուհու պարագան եւ այլն, եւ այլն:

Հետաքրքրականն այն է, որ Խաչատուրովն ինքը խուսափում է հրապարակային ելույթներից: Եվ եթե հանդես է գալիս, միայն պրոֆեսիոնալ թեմաներով՝ կապված խոշոր բիզնեսի հետ՝ ապահովագրություն, բանկային գործ, ֆինանսներ եւ այլն:

Մի քանի ամիս առաջ Դանիլ Խաչատուրովն ընտանիքով ու գործընկերներով Հայաստանում էր, Էջմիածնում կնքեց իր երեխային: Զբաղվում է բարեգործությամբ, ֆինանսավորել է եկեղեցու կառուցումը Ղարաբաղում, խոստացել է աջակցել Մոսկվայում կառուցվող եկեղեցական համալիրին:

Ռ. Հ.

Մերկելը պատեհապա՞շտ է, թե՞ հրաշալի ռազմավար

Կոմունիստական Գերմանիայում ծնված, մասնագիտությամբ ֆիզիկոս, կղերականի դուստր Անգելա Մերկելը այնքան էլ չէր զբաղվում քաղաքականությամբ, երբ 1989-ին քանդվեց Բեռլինի պատը: Երկու տարի առաջ դարձավ Գերմանիայի առաջին կին կանցլերը եւ անմիջապես դասվեց Եվրոպայի կարեւորագույն առաջնորդների շարքում բարենորոգումների իր ծրագրերով: Այժմ, ըստ ամերիկյան «Newsweek»-ի լրագրողի, որդեգրել է ռիսկերից խուսափելու քաղաքականությունը: Ի՞նչ է պատճառը:

«Ամռանը անցկացված հասկանշական մի հարցախույզ զարմանք պատճառեց Բեռլինի քաղաքական բնագավառում», գրում է Ստեֆան Թայլը «Նյուզուիքի» հոկտեմբերի 29-ի համարում, մանրամասնելով, որ Ալենբախ ինստիտուտը պարզել էր, որ Արեւմտյան Գերմանիայի բնակչության 45, իսկ Արեւելյանի բնակչության 57 տոկոսը «սոցիալիզմը լավ գաղափար է» համարում: Գերմանացիների (միասնաբար վերցված) միայն 25 տոկոսը համաձայն չի եղել այս մտքին:

«Քառասուն տարվա կոմունիստական ավերիչ փորձառությունից հետո սոցիալիզմի «կախարդական հմայքը» վերջին 15 տարում դանդաղ, բայց հետեւողականորեն աճել է», նշում է վերոհիշյալ ինստիտուտի քաղաքական մեկնաբան Թոմաս Պետերսոնը:

Եվ սա, շարունակում է Ստեֆան Թայլը, այն դեպքում, երբ Գերմանիայի կապիտալիստական տնտեսությունը անհավատալի վերելք է ապրում, շնորհիվ որոշակի ոչ-սոցիալիստական բարենորոգումների: Վերջին մեկ տարում մեկ միլիոն գերմանացիներ թողել են գործազուրկների բանակը` 12 տոկոսից (2005) 9 տոկոսի իջեցնելով նրանց թիվը: Նույնիսկ 50 տարեկանից մեծ մարդիկ աշխատանք են կարողանում գտնել:

Բայց կարծես թե այդ բարենորոգումների վերջը եկել է: Կոալիցիոն կառավարության երկու կուսակցությունները` կենտրոն-ձախակողմյան սոցիալ-դեմոկրատներն ու Մերկելի կենտրոն-աջակողմյան քրիստոնեադեմոկրատները խորհրդարան ներկայացրած իրենց առաջարկներով շրջադարձ են ցանկանում կատարել, մինչ ինքը` Մերկելը, անորոշության սահմաններում անգործության է մատնված:

«Գերմանիայի տնտեսական վիճակը կարող է մթագնել, եթե այդ առաջարկներն օրենքի ուժ ստանան», այդ առթիվ նշել է Լոնդոնի «Ամերիկյան բանկի» գլխավոր տնտեսագետ Հոլգեր Շմիդինգը:

«Հետադարձն առավել ողբերգական է մեզ ներկայանում, երբ հաշվի ենք առնում, որ Մերկելը ծնվել եւ մեծացել է Արեւելյան Գերմանիայում ու ճաշակած պետք է լիներ այդ համակարգի դառնությունները, խորհրդածում է Ստեֆան Թայլը եւ շարունակում, Նրա կառավարման երկու տարիների ընթացքում դրական առաջընթացներ արձանագրվել են` նվազել եւ պարզեցվել են ֆիզիկական անձանցից գանձված հարկերը, 65-ից 67-ի բարձրացվել թոշակի անցնելու տարիքը, բայց հանկարծ նա հայտնվել է դիտողի դերում եւ սոսկ հետեւում է, թե ինչպես են 2 կուսակցություններ քանդում կատարվածը: Սոցիալ-դեմոկրատներն իրենց անդամներին մղում են դեպի արմատական մի նոր կուսակցության, որ կոչվում է պարզապես «Դի Լինքե» («Ձախերը»): Դրա նախագահը` Օսկար Լաֆոնտենը ստալինյան մի պոպուլիստ է, որն ըստ Թայլի, հակված է իր համակրանքն արտահայտելու Չավեսի եւ Ահմադինեժադի նկատմամբ: Դեմագոգիան կարծես գործում է, գրում է Թայլը, եւ այժմ նրանք ընտրողների 11 տոկոսը կարող են հավաքել: Սոցիալ-դեմոկրատները` 25 տոկոս, իսկ կանաչները` 10 տոկոս: Բայց ամենացնցող երեւույթն այն է, որ «Դի Լինքեի» կողմնակիցների թիվը գնալով ավելանում է եւ գերմանացիների 2/3-ն այժմ պաշտպանում է այդ կուսակցության քաղաքականությունը»:

Լրագրողը ապշեցնող է գտնում, որ բարենորոգումների արդյունավետության հենց այս շրջանում նման հակադարձ դիրքորոշում որդեգրի ժողովուրդը, եւ խորհրդածում է, որ դժգոհության հիմնական պատճառը գուցե «սոցիալական արդարություն» (որը գերմանացիների համար ամենաբարձր արժեքն է) հաստատելու կառավարության անկարողությունն է: «Ժողովրդի 75 տոկոսը գտնում է, որ այդ ուղղությամբ կառավարությունը ոչինչ չի անում», գրում է նա ավելացնելով, որ մարդիկ ցանկանում են «Դոյչե թելեկոմի» նման խոշոր ձեռնարկությունները վերադարձնել պետությանը: «Նրանք մտափոխ են եղել, եւ ցանկանում են, որ պետությունը վերահսկի տնտեսությունը», ասում է Մանֆրեդ Գյուլները` «Ֆորսա» հասարակական կարծիքի ինստիտուտի նախագահը:

Ժողովուրդը փաստորեն փորձում է գերմանական ընկերությունները փրկել օտարերկրացիների ձեռքից: Սեփականաշնորհումները նվազել են, ինչը տնտեսագետներին հիմք է տվել կանխագուշակելու, որ Մերկելը չի կարողանալու իրագործել իր «հզոր Գերմանիայի» ծրագրերը:

Խնդրի ողբերգական կողմն այն է, որ Մերկելն ինքը խուսափում է ռիսկային քայլերի դիմելուց, կարծես «չի ցանկանում խառնվել երկրի քաղաքականությանը», ինչպես Գյուլներն է բնութագրում:

Որոշ մարդիկ նրան պատեհապաշտ են անվանում, ուրիշները` հրաշալի ռազմավար, որն օգտագործելով կանաչների, կենտրոն-ձախակողմյանների եւ մյուսների քաղաքականության միաձուլումից առաջացած նոր տարբերակը, փորձում է սիրաշահել երկու կուսակցությունների արանքում տատանվողներին, որպեսզի վերջնականապես ճզմի սոցիալ-դեմոկրատներին 2009-ի ընտրություններում:

«Առաջիկա ամիսներին պարզ կդառնա, թե ինչքան խորն է կատարված բարեփոխումների ազդեցությունը: Հավանաբար պարզ կդառնա նաեւ Մերկելի դիրքորոշումը», եզրակացնում է Թայլը:

Պատրաստեց Հ. Ծ.

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուսաստանին առաջարկում են դուրս չգալ ԵՍԶՈւ պայմանագրից

ԱՄՆ-ը Ռուսաստանին պաշտոնապես առաջարկել է համագործակցել Արեւելյան Եվրոպայի հակահրթիռային պաշտպանության ոլորտում: Մեկ ուրիշ առաջարկությամբ ամերիկյան կողմը ՌԴ նախագահին հորդորում է հրաժարվել Եվրոպայի սովորական զինված ուժերի (ԵՍԶՈւ) պայմանագրից դուրս գալու մտադրությունից:

Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, երկու փաստաթղթերի կեսերը Մոսկվայի հոկտեմբերյան բանակցություններում քննարկել էին ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը, պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը եւ արտգործնախարար Սերգեյ Լավրովը:

Բանակցությունները շարունակելու համար Մոսկվան ամերիկացիներից պահանջել էր առաջարկությունների գրավոր ձեւակերպում: Ենթադրվում է, որ Ռայսը եւ Լավրովը նոր փաստաթղթերը կքննարկեն առաջիկա երկուշաբթի` Աննապոլիսի մերձավորարեւելյան խորհրդաժողովի նախօրեին:

Նոր առաջարկությունների մոտավոր ցանկը հետեւյալն է. Ռուսաստանում եւ Արեւմուտքում հակահրթիռային պաշտպանության համակարգերի գոտու ընդլայնման նպատակով ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի համակարգերի միավորում, Լեհաստանում հակահրթիռային պաշտպանության ամերիկյան օբյեկտում ռուսների տեսչական ստուգումների թույլատրում, ամերիկյան կալանիչ հրթիռների ակտիվացման հետաձգում` մինչեւ իրանական բալիստիկ հրթիռների Եվրոպա հասնելու հնարավորության հաստատումը:

Ռուսական կողմը դրականորեն է գնահատում ակտիվացումը հետաձգելու գաղափարը, սակայն պահանջում է պարտավորեցնող պայմանագրի ստորագրում, որտեղ մանրամասն նշված կլինեն ակտիվացման պայմանները: Այդ մասին Ասոշիեյթեդ պրեսին հայտնել է ՌԴ դիվանագիտական աղբյուրներից մեկը: Վերջինիս կարծիքով, ԱՄՆ-ը հակված է կատարելու ռուսական կողմի այդ պահանջը:

Վարչապետ Բրաունը «խոր ափսոսանք» հայտնեց նպաստների տվյալների կորստյան առթիվ

Հարկային եւ մաքսային վարչության պետը հրաժարական տվեց

Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունը երեկ խորհրդարանում «խոր ափսոսանք» է հայտնել 25 մլն մանկական նպաստների տվյալները պարունակող երկու խտասկավառակների կորստյան առթիվ: Նրա խոսքերով, կառավարությունը միջոցներ կձեռնարկի, որպեսզի տվյալները չկիրառվեն խարդախության նպատակով:

Ավելի վաղ ներողություն էր խնդրել ֆինանսների նախարար Ալիստեր Դարլինգը, որը բրիտանացիներին խորհուրդ էր տվել համենայն դեպս ստուգել իրենց բանկային հաշիվները:

BBC-ն տեղեկացնում է, որ նպաստառու երեխաների հասցեները, ծննդյան թվականները, ապահովագրերի համարները եւ բանկային հաշիվները պարունակող երկու խտասկավառակները հոկտեմբերի 18-ին հարկային եւ մաքսային վարչությունից սովորական թղթատարական ծառայության միջոցով առաքվել էին աուդիտի ազգային բյուրո: Հոկտեմբերի 24-ին պարզվել էր, որ ծանրոցն անհետացել է: Դրանից հետո առաքվել էր պատճենը:

Թղթատարական ծառայությունը կորստի մասին իմացել էր նոյեմբերի 3-ին: Վարչապետը եւ կառավարությունը միջադեպին տեղեկացել էին նոյեմբերի 10-ին, ոստիկանությունը` 14-ին:

Միջադեպի պատճառով հրաժարական է տվել հարկային եւ մաքսային վարչության պետ Փոլ Գրեյը:

Միջկորեական երկաթուղային կապը կվերականգնվի դեկտեմբերին



Երկու Կորեաների միջեւ 1951-ին ընդհատված երկաթուղային հաղորդակցությունը կվերականգնվի դեկտեմբերի 11-ին: Այդ մասին հայտարարել է Հարավային Կորեայի միավորման գործերի նախարարությունը: Կանոնավոր բեռնափոխադրումների վերսկսման շուրջը երկու կողմերը ընդհանուր համաձայնության էին եկել անցյալ շաբաթ կայացած վարչապետների հանդիպման ժամանակ:

Միջկորեական բեռնափոխադրումների վերսկսման գլխավոր նպատակը հումքի եւ ապրանքների փոխադրման մշտական ուղու բացումն է Հարավային Կորեայի եւ նրա ներդրումներով հյուսիսկորեական Կեսոն քաղաքում ստեղծված հատուկ արդյունաբերական գոտու միջեւ: Այնտեղ գործում են լայն սպառման ապրանքներ թողարկող հարավկորեական մի շարք ձեռնարկություններ:

Երկու Կորեաները կապող 19,8 կիլոմետրանոց երկաթգիծը թույլ կտա զգալիորեն կրճատել մինչեւ օրս բեռնատարներով իրականացված փոխադրումների ծախսերը: ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը նշում է, որ կորեական միացյալ երկաթուղին հետագայում կարող է դառնալ Անդրսիբիրյան մայրուղու եւ Անդրչինական երկաթգծի շարունակությունը, մեծացնելով Ասիա-Եվրոպա առեւտրային բեռնափոխադրումների արդյունավետությունը:

Դատարանը հաստատեց Մուշարաֆի նախագահությունը

Պակիստանի գերագույն դատարանը երեկ մերժել է ընդդիմության հանրագիրը, որը վիճարկում է գործող նախագահ Փերվեզ Մուշարաֆի վերընտրության օրինականությունը: Դատավճիռը նշանակում է, որ Մուշարաֆը պաշտոնապես երկրի նախագահ կհայտարարվի նոր հնգամյա ժամկետով, ընդգծում է ՌԻԱ գործակալությունը:

Ավելի վաղ Պակիստանի գլխավոր դատախազ Մալիք Մոհամմեդ Քայումը լրագրողներին հայտնել էր, որ արդեն շաբաթ օրը Մուշարաֆը կարող է հրաժարվել բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնից եւ նախագահական երդում տալ որպես քաղաքացիական անձ:

Տվյալ հարցի քննարկումը շարունակվում էր երկու ամիս: Օրերս գերագույն դատարանը մերժել էր ընդդիմադիր կուսակցությունների վեց հանրագրերից հինգը: Գեներալ Մուշարաֆը հաղթել էր հոկտեմբերի 6-ի նախագահական ընտրություններում, բայց գերագույն դատարանն այն ժամանակ որոշել էր ընտրությունների պաշտոնական արդյունքները ճանաչել ընդդիմության գանգատների քննարկումից հետո միայն:

Բանակի գլխավոր հրամանատար Մուշարաֆը իշխանության գլուխ անցավ 1999-ի անարյուն զինվորական հեղաշրջումից հետո: Մինչեւ օրս նա զբաղեցնում է նախագահի եւ գլխավոր հրամանատարի պաշտոնները:

Նոյեմբերի 3-ին երկրում հայտարարվեց արտակարգ դրություն, ընդհատվեց սահմանադրության գործողությունը, անջատվեցին մասնավոր հեռուստաալիքները, մայրաքաղաք Իսլամաբադ եւ այլ քաղաքներ մտցվեցին զորքեր, գերագույն դատավորը պաշտոնանկ արվեց, գերագույն դատարանի կազմը նորացվեց, ձերբակալվեցին ընդդիմադիր ուժերի հարյուրավոր ներկայացուցիչներ:

ՆԱՏՕ-ն ուզում է վարձել ռուսական ուղղաթիռներ

ՆԱՏՕ-ն մտադիր է Աֆղանստանում օգտագործելու համար վարձակալել ռուսական ուղղաթիռներ` դրանց անձնակազմերով: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի տվյալներով, ՆԱՏՕ-ն ուզում է ռուսական եւ ուկրաինական ավիաընկերություններից «Մի-17» տիպի 20 եւ «Մի-26» տիպի մի քանի ծանր ուղղաթիռներ վարձել թիկունքային փոխադրումների համար, որպեսզի նվազեցնի սեփական մեքենաների կործանման վտանգը:

Ներկայումս արդեն բանակցություններ են վարվում որոշ ավիաընկերությունների հետ: ՆԱՏՕ-ն պատրաստ է երկու տասնյակ «Մի-17» ուղղաթիռների դիմաց վճարել տարեկան 100 մլն դոլար, մինչդեռ ավիաընկերությունները պահանջում են մեկ ուղղաթիռի դիմաց շաբաթական 100 հազար դոլար, որը փոքր-ինչ ավելի թանկ է:

Միայն 2006-ին Աֆղանստանում վնասվել կամ խփվել է 37 ուղղաթիռ: Իսկ վերջերս գրոհայիններն սկսել են օգտագործել շարժական զենիթային հրթիռակայաններ, որոնք ձեռքի նռնականետներից վտանգավոր են:

Չար բաներուն բարեւ ըսէք մեր կողմէն

Փառավոր բան կլինի, եթե մի օր զարթնես ու քո մեջ Զահրատ որոնես: Աստված վկա, փառավոր բան կլինի: Որովհետեւ այդ մի օրը դու մաքրված կլինես զզվելի բաներից: Ու այդ օրը կգտնես ծիրանի այն վիճակը, երբ այս ծիրան ասվածը ցոգոլ չէ ու ատամներդ չի առնում, ոչ էլ հասած-լխկած է՝ ամեն մի երազանք ու ցանկություն կորցրած պառավի պես, որին մնացել է միայն քաղաքականությամբ զբաղվել: Գիտես, չէ՞, այն աղջկան, ով կրակվում է խորհրդավոր գաղտնիքը բացելու համար, բայց ամաչում է առավոտվա լույսից...

Զահրատին հայտնագործելու համար բնավ պարտադիր չէ Ստամբուլ հասնես, ուր «Նշանթաշի կողմերը Հարծի Լեւոնի տան մեջ 1924-ի մայիսի տասնին շաբաթ օր մը աշխարհ եկայ-առաւօտ էր... »: Աշխարհի տան ու տաղը հասկանալու համար պիտի գնաս աշխարհի ուրախ-տխուր փողոցներով, մեծ մարդկանց ցավերը զգաս, առավել զգաս փոքր մարդու ցավը, պիտի լաս, խնդաս, առավելը՝ պիտի պատրանքդ անմար պահես, որպեսզի ամեն օր ու ամեն ժամ կարողանաս մեջդ կաղանդի ծառ մը ցցել: Ինքդ քեզ մինչեւ տոնի մեջ պահելու համար:

Այդպիսի մի տոն էր ինձ համար, երբ հանդիպեցի իրեն՝ Հայաստան կատարած իր վերջին այցի ժամանակ: Հարցրի՝ ի՞նչ հալի ես, Զահրատ: Ասաց՝ միտքը դրեր է Կիկօ՝ պիտի չմեռնի: Ասացի՝ ի՞նչ մահ, ի՞նչ մեռնել, ի՞նչ ֆլան-ֆստան, Զահրատ, մեռնելն ո՞ւր, դու ո՞ւր, Զահրատ: Ասաց՝ հա, ճիշտ կըսես: Ասացի՝ էս որտեղի՞ց գար քո Կիկոյին: Ասաց՝ շաբաթ օր մը, 1924-ի մայիսի տասնին, Նշանթաշի կողմերը, Հարծի Լեւոնի տան մեջ... Ասացի՝ էս էլ էստեղ մի Արո եմ գտել, որ առավոտ-իրիկուն բանաստեղծություն է ասում բարձրաձայն ու էդ իր ասածներից մեկն էլ էն է, թե՝ «ժամանակով կատուն շուն էր, Շունն էլ գլխին գնդակ չուներ...»: Ասաց՝ Է՜, փառահեղ մարդ է էդ քո ասած Արոն: Պատերի տակ, կամուրջների տա՞կ կքնանա: Չէ, ասացի, Զահրատ, չէ, մեր երազների մեջ է նա արթուն: Է՜, փառավոր մարդ է քո Արոն: Ան ճնճղուկներին կեր կուտա՞: Ասացի՝ հա, բոլորին, նաեւ փարավիրներին է կեր տալիս...

Էսպես շատ ու շատ բաների մասին խոսեցինք, ու ես հասկացա, որ էս երկինքը դեռ փուլ չի գալու, որովհետեւ Վիլյամ Սարոյանի նման մի ուրիշ մեկին էլ հանդիպելու բախտ ունեցա իմ կյանքում: Ու երբ վերջերս բախտ ունեցա սեղանիս դնելու նաեւ Զահրատի ընտրանին՝ «Բառ բառի քով», հասկացա, որ իմ բարեկամ Այդին Մորիկյանը փառահեղ բան է արել՝ բառը բառի մոտ բերելով, ընտիր մի գիրք է պարգեւել մեզ: Չէ, գիրք ասածը քիչ է: Ավելին է, քան գիրքը:

Գացէք ըսէք չար բաներուն
որ չըլլան
Որ չըլլայ թէ պատահին
Կամ երբ ըլլան հեռու մնան մեր
այս պզտիկ աշխարհէն
Ձայն ու հոտը խափարելու
չհասնին
Չար բաներուն բարեւ ըսէք
մեր կողմէն...

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Մեծարման երեկո՝ նվիրված Վանուշ Խանամիրյանի 80-ամյակին

Երեկ Ազգային գրադարանում մեծարման երեկո էր՝ նվիրված Վանուշ Խանամիրյանի ծննդյան 80-ամյակին:

Նրա բեմադրած պարերը արժանացել են ժողովրդի անվերապահ սիրուն ու գնահատանքին: Հայ պարարվեստի լեգենդը համոզված է, որ եթե Կոմիտասը զտեց հայկական ժողովրդական երգերը օտար ազդեցություններից, ապա ինքն էլ ժողովրդական պարին մոտեցավ՝ կողմնակից լինելով մաքուր, զուլալ հայկական պարերի եւ դիմադիրը՝ ամեն տեսակ խառնածին ավելորդությունների:

«Չէի սպասում այսպիսի միջոցառման՝ այն էլ Ազգային գրադարանում, հայ ընթերցողների ու մտավորականների հետ: Ես ինքս էլ չգիտեմ, թե ինչ միջոցառում պետք է լինի: Բոլորից շնորհակալ եմ՝ ե՛ւ կազմակերպիչներից, ե՛ւ գրադարանի տնօրենությունից: Յուրաքանչյուր արվեստագետ իր կյանքի ուղին սկսում է յուրովի: Եվ այդ ինքնատիպության մեջ է նրան ընդունելու բանալին: Չնայած անցավ իմ 80-ամյակը եւ պետք է ասեմ շատ շքեղ տոնով նշեցինք օպերայի եւ բալետի թատրոնում: Այնքան շոյված եմ իմ ժողովրդից, որ այսքան մեծարում է ինձ», ասաց ՀՀ ժողովրդական դերասան, պետական բազմաթիվ մրցանակների դափնեկիր, Հայաստանի պարարվեստի գործիչների միության նախագահ Վանուշ Խանամիրյանը:

Խանամիրյանը պարի պետական անսամբլ եկավ դասական բալետից եւ այն էլ՝ փառաբանված: Բալետային արվեստը սիրողների մեջ դեռ թարմ են նրա մի շարք նշանավոր դերակատարումները:

Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանն ասաց. «Մեր գրադարանի մեծ բարեկամ, որը վաղուց անհատ չէ՝ խորհրդանիշ է հայոց պարարվեստի, մշակույթի, ներկայացվել է ամբողջ աշխարհում: Իր 100-ամյակը կրկին այստեղ պետք է տոնենք: Վանուշը երիտասարդ է՝ եռանդով լեցուն, մեր մշակույթի ռահվիրան, որի առաջ ես խոնարհվում եմ: Պարը արվեստ է, ստեղծագործություն, որը տառապանքով է ստեղծվում: Խանամիրյանի ներկայությունը մեր մշակույթի մեջ պետք է լինի հարատեւ»:

Ազգային գրադարանի դահլիճում հոտնկայս դիմավորեցին Վանուշ Խանամիրյանին՝ իր իսկ բեմադրած պարերի ներքո: Պարում էին բոլորը, պարում էր նաեւ Վանուշ Խանամիրյանը: Ելույթներով հանդես եկան «Հայ-ամերիկյան արվեստ» կենտրոնի սաները: Հայաստանի Ազգային գրադարանի կողմից հայ պարարվեստին մատուցած մեծ ծառայությունների եւ 80-ամյակի առիթով ՀՀ ժողովրդական արտիստ, բալետմայստեր Վանուշ Խանամիրյանը պարգեւատրվեց հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի մեդալով:

ՆԱԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոնում են Նախիջեւանի մասին պատմող ժապավեններ ու մարդկանց

Խաչատուր Մարգարյանը կինոարտադրություն է մտել ընդամենը 2 տարի առաջ, «Հայֆիլմ» կինոստուդիայում նկարահանելով «Սրնգափողի մենանվագը» կարճամետրաժ ֆիլմը: Մասնագիտությամբ մաթեմատիկոս է, զբաղվել է մանկավարժությամբ, լրագրությամբ, իսկ հիմա փորձում է ֆիլմ նկարահանել Նախիջեւանի պատմական դեպքերի ու դեմքերի մասին: Նյութերի սակավության պատճառով առ այսօր նկարահանել է մի քանի կադր, որոնցում 94-ամյա նախիջեւանցին պատմում է, թե խորհրդային տարիներին որքան մեծ է եղել Ադրբեջանի, մասնավորապես երկրի նախագահ Հեյդար Ալիեւի ազդեցությունը քաղաքական որոշումներ ընդունելու ժամանակ: 1930-ականներին զբաղեցնելով պետական կարեւոր պաշտոն, ինքն անզոր է եղել Նախիջեւանի օգտին որեւէ հարց լուծելու:

Կինոյի տանը երեկ հրավիրած ասուլիսում Մարգարյանը նշեց, որ ֆիլմը ազդեցիկ դարձնելու համար իրենք կարիք ունեն Նախիջեւանի մասին պատմամշակութային հարուստ նյութերի, որի համար դիմում են հանրությանը՝ աջակցության խնդրանքով: Հայագետ Արգամ Այվազյանի գրքերի եւ «Խզված մեղեդի՝ Ջուղա» ֆիլմի մասին ակնարկելուց հետո նրան ուղղեցինք հետեւյալ հարցը. «Ինչո՞վ է ձեր ֆիլմը տարբերվելու պատմամշակութային փաստերով հարուստ այդ ֆիլմից, ինչո՞վ է առանձնանալու, երբ ձեր սցենարն ամբողջական չէ նյութեր չունենալու պատճառով»: Ասուլիսին ներկա կինոռեժիսոր Ռուբեն Գեւորգյանցը նշեց, որ Այվազյանի ֆիլմն արված է սիրողական մակարդակով, մինչդեռ Նախիջեւանի մասին պետք է ունենալ բոլորովին այլ որակի ֆիլմ, հաշվի առնելով դրա քաղաքական նշանակությունը:

«Իսկ ո՞վ է ֆիլմի հովանավորը», մեր հաջորդ հարցին Մարգարյանը պատասխանեց, որ հույս ունի պետական հովանավորություն ստանալու, բայց կցանկանար ֆինանսական աջակցություն ստանալ նաեւ անհատներից: Հիմա պատրաստվում են նկարահանել Նախիջեւանի վերաբերյալ Մատենադարանում պահված ձեռագրերը, որից հետո կանցնեն արխիվային նյութերին: Ֆիլմի քաղաքական բովանդակության համար կարեւոր նշանակություն ունեն Կրասնոգորսկի արխիվները, քանի որ ժամանակին ադրբեջանցիները բավականին նյութեր են նկարահանել Նախիջեւանի մասին ու պահ տվել այնտեղ: Խորհրդային տարիներին մեզանում այդպիսի ֆիլմեր չեն նկարահանվել, որովհետեւ արգելված է եղել Նախիջեւանում նկարահանումներ կատարելը, ոչ մի կինոբեմադրիչ իրավունք չի ունեցել կինոխցիկով մտնել Նախիջեւան:

Ռ. Գ.

ԲԵՅՐՈՒԹ

Լիբանանի նախագահի բարձր պարգեւատրումը հայ մտավորականին

Օրերս Բեյրութի Ազգային Լեւոն եւ Սոֆյա Հակոբյան վարժարանի սրահում տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն: Երկրի նախագահ Էմիլ Լահուդի ներկայացուցիչ, նախկին նախարար Սեպուհ Հովնանյանը հրապարակագիր եւ լրագրող Շահանդուխտին հանձնեց «Ասպետի կարգի Մայրիների շքանշանը»:

Հանդիսության բացման խոսքով հանդես եկավ «Ազդակ»-ի աշխատակից Ժակ Հակոբյանը: Ապա ելույթ ունեցան Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության տեղեկատվության բաժանմունքի վարիչ Գրիգոր Ծ. վրդ. Չիֆթճյանը, թեմական առաջնորդ Գեղամ եպս. Խաչերյանը, «Ղարուհի Հակոբյան» վարժարանի տնօրեն Ժիրայր Դանիելյանը, «Ազդակ» օրաթերթի նախկին եւ ներկայիս խմբագիրներ Երվանդ Փամփուկյանը եւ Շահան Գանտահարյանը:

Բոլոր բանախոսները նշեցին Շահանդուխտի ներկայանալի ներդրումը հայ հրապարակագրության եւ լրագրողության մեջ: Լինելով նախ՝ «Այգ», ապա՝ «Ազդակ» թերթերի աշխատակիցը, շուրջ 50 տարի անխոնջ ծառայել է լիբանանահայ մամուլին, հեղինակել պատմավավերագրական կարեւորություն ունեցող՝ լրագրողական, հրապարակախոսական, ինչպես նաեւ գրական ստեղծագործություններ: Դրանց անգնահատելի արժեքը ժամանակն ու իրականությունը սթափ, փաստագրական եւ, միաժամանակ, մարդկայնորեն ազնիվ ու ջերմ կերպով ներկայացնելն է:

Բուրճ Համուդի զավակ Շահանդուխտը իր գործերում մեծապես անդրադարձել է թաղի հայ բնակչության կյանքին, կերտել պարզ մարդու՝ Բուրճ Համուդի իր ուսերին պահող, շենացնող եւ ապրեցնող հայ մարդու կերպարը: Պատկերել է նրա ոչ դյուրին առօրյան թե՛ խաղաղության, թե՛ պատերազմական օրերին:

Փաստորեն, Շահանդուխտը յուրատեսակ կենսագիրն է լիբանանահայության կյանքի ստվար մի ժամանակահատվածի:

Ինչպես շեշտեց իր ելույթում «Ազդակ»-ի խմբագիր Շահան Գանտահարյանը, Շահանդուխտը ոչ միայն իր մեծ եւ անուրանալի վաստակն է բերել թերթին ամբողջ 30 տարիների ընթացքում, այլեւ ընդհանրապես սփյուռքահայ մամուլի երեւելի դեմքերից մեկն է՝ իր ազգանպաստ գործունեությամբ:

Գեղամ եպս. Խաչերյանը իրավամբ նկատեց, որ Լիբանանի նախագահ Էմիլ Լահուդի՝ հայ մտավորականին շնորհված այս բարձր պարգեւը յուրովի վերաբերմունքի արգասիք է եւ պարգեւ է ընդհանրապես լիբանանահայությանը: Խորհրդանշական փաստ, որ հայ համայնքի գնահատանքին է արժանի:

Հանդիսության ավարտին իր հուզիչ խոսքում, շնորհակալություն հայտնելով երկրի նախագահին, Շահանդուխտը կոչ արեց Լիբանանի հայությանը գոտեպնդվել համբերությամբ եւ հավատով՝ երկրի համար ներկայիս ո՛չ հեշտ օրերում եւ սիրել իրենց «Լիբանանյան հայրենիքը», այնպես, ինչպես ինքը՝ Շահանդուխտն է սիրում այն թե՛ իր գրվածքներում, թե՛ կյանքում:

Էմիլ Լահուդի՝ հայ մտավորականին պարգեւի հանձնման արարողությանը ներկա էր Լիբանանում Հայաստանի դեսպան Վահան Տեր-Ղեւոնդյանը:

Բեյրութ,
«Ազգ»-ի սեփական թղթակից

Հնչյուններ եւ գույներ

Երեկ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրի սաների մասնակցությամբ տեղի ունեցավ «Արամ Խաչատրյան. հնչյուններ եւ գույներ» մշակութային միջոցառումը: Մեկ ամիս առաջ Արամ Խաչատրյանի անվան թանգարանի տնօրենությունը կրթահամալիրի սաներին էր ուղարկել ձայնասկավառակներ, կոմպոզիտորի մասին գրքեր: Երեխաները գույներով պետք է արտահայտեին իրենց պատկերացումները, զգացմունքներն ու հոգեվիճակը: 11-ամյա Սերգեյը միջոցառմանը ներկայացրել էր «Դիմակահանդես» ստեղծագործությունը: Խաչատրյանական երաժշտությունը նա նմանեցնում է վարար գետի հետ, լսում ոչ թե ականջներով, այլ հոգով:

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիրի տնօրեն Գոհար Սաղոյանը նշում է, որ այսօրինակ միջոցառումները կարեւոր նշանակություն ունեն պատանիների ինտելեկտի զարգացման համար: Ու զարմանալի մի դիտողություն է անում. «Գեղարվեստական թեքումով դպրոց է, սակայն մեր սաներից շատերը չգիտեն, թե ինչ է բալետը, ոմանք էլ չէին լսել Արամ Խաչատրյանի երաժշտությունը: Միջոցառումը հիանալի առիթ է, որպեսզի երեխաները ավելի մոտ լինեն ազգային դասական երաժշտությանը»:

«Սա նմանատիպ առաջին նախաձեռնությունը չէ: Այսպիսի միջոցառում կազմակերպեցինք նաեւ Դ. Դեմիրճյանի անվան հանրակրթական դպրոցի հետ, ուր սաները ներկայացրին շարադրություններ: Այս անգամ որոշեցինք խաչատրյանական երաժշտության հնչյուններն արտահայտել գույների միջոցով», ասում է Ա. Խաչատրյան տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խորվաթները ռուսների համար եզրափակիչի ուղի հարթեցին

Հայտնի դարձան 2008-ին Ավստրիայում եւ Շվեյցարիայում կայանալիք ֆուտբոլի Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի բոլոր 16 մասնակիցները: Նրանցից չորսը որոշվեցին ավարտական տուրում:

Ամենախոշոր անակնկալը Անգլիայի հավաքականի անհաջողությունն էր: Անգլիացիները «Ուեմբլի» մարզադաշտում 2-3 հաշվով զիջեցին եզրափակիչի ուղեգիրը ժամկետից շուտ նվաճած խորվաթներին՝ դրանով իսկ եզրափակիչի ուղի հարթելով Ռուսաստանի հավաքականի համար, որը հյուրընկալվելիս նվազագույն հաշվով (1-0) առավելության հասավ Անդորրայի ընտրանու նկատմամբ:

Ընդհանրապես Անգլիա-Խորվաթիա հանդիպման շուրջ հետաքրքրական իրադարձություններ տեղի ունեցան: Խորվաթներին շահագրգռելու նպատակով ռուսաստանցի որոշ գործարարներ խոշոր պարգեւավճարներ էին խոստացել, եթե նրանք կարողանային հաղթել անգլիացիներին: Մասնավորապես Լեոնիդ Ֆեդունը խոստացել էր հաղթանակի դեպքում «Մերսեդես» մակնիշի մեքենա նվիրել Խորվաթիայի հավաքականի դարպասապահին ու լավագույն երեք ֆուտբոլիստներին: Այս առնչությամբ նույնիսկ ՈՒԵՖԱ-ի չինովնիկները հայտարարել էին, որ դա փաստորեն հավասարազոր է կաշառքի: Այդ հայտարարությունը հարուցել էր Ռուսաստանի ֆուտբոլային միության զայրույթը, որի ղեկավարությունը զարմանք էր արտահայտել, թե ինչու նմանատիպ վերաբերմունքի չէր արժանացել բրիտանացի բուքմեյքերի վարմունքը, որը իսրայելցիներին էր խոշոր պարգեւավճար խոստացել, եթե նրանք հաղթեին ռուսներին:

Իհարկե, դժվար է գուշակել, թե արդյոք այդ ամենն ազդեցի՞ն Անգլիա-Խորվաթիա խաղի մասնակիցների վրա: Ամեն դեպքում խորվաթներն իրենց գերազանց դրսեւորեցին: Արդեն 14-րդ րոպեին նրանք Կրանչարի եւ Օլիչի դիպուկ հարվածների շնորհիվ խաղը շահում էին 2-0 հաշվով: Անգլիացիները միայն 2-րդ խաղակեսում ուշքի եկան: 10 րոպեի ընթացքում նրանց հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Նախ Լեմփարդը 11 մ հարվածով կրճատեց հաշիվը, ապա Կրաուչը խփեց 2-րդ գոլը: Բայց անգլիացիներին վիճակված չէր զարգացնել հաջողությունը: 77-րդ րոպեին Պետրիչը մոտ 25 մետրից խփեց հաղթական գոլը, որը անգլիացիներին զրկեց ուղեգրից: Այսպիսով, Անգլիայի հավաքականը 1994-ից սկսած առաջին անգամ չկարողացավ խոշոր մրցաշարի եզրափակիչ փուլ մտնել: 1994-ին նրանց չհաջողվեց աշխարհի առաջնության ուղեգիր նվաճել եւ հավաքականի այն ժամանակվա գլխավոր մարզիչ Գրեմ Թեյլորն անմիջապես պաշտոնանկ արվեց: Նույնը տեղի ունեցավ նաեւ ներկայիս մարզիչ Սթիվ Մակլարենի հետ: Նշենք, որ վերջին անգամ Անգլիայի հավաքականը չի մասնակցել միայն 1984-ի Եվրոպայի առաջնությանը:

Խաղից առաջ Խորվաթիայի հավաքականի գլխավոր մարզիչ Սլավեն Բիլիչը, ինչպես նաեւ ֆուտբոլիստներ Իվիցա Օլիչը, Ստիպե Պլետիկոսը եւ Դարիո Սռնան հայտարարել էին, որ ձգտելու են հաղթել եւ օգնել ռուսներին ուղեգիր նվաճել: Նրանք կատարեցին խոստումը:

«A» խմբից Լեհաստանի հետ ուղեգիր նվաճեց նաեւ Պորտուգալիայի հավաքականը, որին բավական էր սեփական հարկի տակ ոչ-ոքի խաղալ ֆինների հետ: Այդպես էլ եղավ. դարպասները մնացին անառիկ: Իսկ սերբերը սեփական հարկի տակ չկարողացան հաղթել լեհերին (2-2): Նոյեմբերի 24-ին սերբերը հյուրընկալելու են ղազախներին: Բելգիացիներն էլ հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեցին ադրբեջանցիներին:

Եվրոպայի առաջնությունում հանդես կգան նաեւ թուրքերը: Ուղեգրի նվաճման համար նրանց անհրաժեշտ էր սեփական հարկի տակ հաղթել Բոսնիայի ընտրանուն: Դա նրանց հաջողվեց: Նիհաթի խփած միակ գոլը հաղթանակ պարգեւեց թուրքերին: Ուղեգիր նվաճելու խնդիրը հաջող լուծեցին նաեւ շվեդները՝ հաղթելով լատվիացիներին (2-1): Ուղեգրին հավակնող Հյուսիսային Իռլանդիայի հավաքականը հյուրընկալվելիս 0-1 հաշվով զիջեց իսպանացիներին:

Մյուս հանդիպումներում գրանցվել են հետեւյալ արդյունքները. Ուկրաինա-Ֆրանսիա՝ 2-2, Վրաստան-Լիտվա՝ 0-2, Իտալիա-Ֆարերներ՝ 3-1, Հունգարիա-Հունաստան՝ 1-2, Մալթա-Նորվեգիա՝ 1-4, Գերմանիա-Ուելս՝ 0-0, Կիպրոս-Չեխիա՝ 0-2, Սան Մարինո-Սլովակիա՝ 0-5, Իսրայել-Մակեդոնիա՝ 1-0, Դանիա-Իսլանդիա՝ 3-0, Բելառուս-Հոլանդիա՝ 2-1, Սլովենիա-Բուլղարիա՝ 0-2, Ռումինիա-Ալբանիա՝ 6-1:

Մրցաշարային աղյուսակ
«A» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Լեհաստան	14	8	4	2	24-12	28
2. Պորտուգալիա	14	7	6	1	24-10	27
3. Ֆինլանդիա	14	6	6	2	13-7	24
4. Սերբիա	13	5	6	2	21-11	21
5. Բելգիա	14	5	3	6	14-16	18
6. Ղազախստան	13	2	4	7	11-20	10
7. Հայաստան	12	2	3	7	4-13	9
8. Ադրբեջան	12	1	2	9	6-28	5

Եվ այսպես, հայտնի են Եվրո-2008-ի եզրափակիչ փուլի բոլոր մասնակիցները: Դեկտեմբերի 2-ին շվեյցարական Լյուցեռն քաղաքում տեղի կունենա մասնակիցների վիճակահանությունը: Ըստ վարկանիշի, հավաքականները նախապես բաշխվել են չորս զամբյուղներում: Նախնական փուլի խմբերում յուրաքանչյուր զամբյուղից կընդգրկվի մեկ հավաքական: Ահա զամբյուղների կազմը:

1-ին. Շվեյցարիա, Ավստրիա, Հունաստան, Հոլանդիա:

2-րդ. Խորվաթիա, Իտալիա, Չեխիա, Շվեդիա:

3-րդ. Գերմանիա, Ռումինիա, Պորտուգալիա, Իսպանիա:

4-րդ. Լեհաստան, Ֆրանսիա, Թուրքիա, Ռուսաստան:

Սամփրասն ու Ֆեդերերը ցուցադրական մրցախաղեր կանցկացնեն

Թենիսիստների համաշխարհային դասակարգման առաջատար Ռոջեր Ֆեդերերը ցուցադրական երեք մրցախաղ կանցկացնի հանրահռչակ թենիսիստ Փիթ Սամփրասի հետ: Թեեւ ամերիկացի թենիսիստը դեռեւս 2002-ին ավարտել էր ելույթները, սակայն այժմ մշտապես մարզվում է, որպեսզի լավ մարզավիճակում գտնվի: Վերջերս նա վետերան թենիսիստների մրցաշարում երեք անգամ հաղթել էր մեկ այլ անվանի ամերիկացու՝ Ջիմ Կուրյեին:

Ֆեդերերն ու Սամփրասը միայն մեկ անգամ են հանդիպել կորտում: Դա 2001-ին էր, Ուիմբլդոնի մրցաշարի չորրորդ փուլում, որում Ֆեդերերը հաղթել էր 5 խաղափուլում:

«Ֆեդերերի հետ հանդիպումները յուրօրինակ կլինեն: Նա այժմ թենիսիստների առաջատարն է, ինչպիսին ժամանակին ես էի: Սակայն նա ինձանից ավելի լավ է խաղում: Կարծում եմ, որ նրան կհաջողվի գերազանցել ռեկորդներս», հայտարարել է Սամփրասը:

Մրցակիցների առաջին հանդիպումն ավարտվեց շվեյցարացի թենիսիստի հաղթանակով (6-2, 6-3): Այդ մրցախաղից հետո 36-ամյա Փիթ Սամփրասը հայտարարել է, որ բացառվում է իր վերադարձը կորտ:

Շանհայում հաղթելուց հետո Ռոջեր Ֆեդերերը լրագրողներին տեղեկացրել է իր հետագա ծրագրերի մասին: Ֆեդերերը մտադիր է հաջող հանդես գալ Պեկինում կայանալիք օլիմպիադայի թենիսի մրցաշարում: Դա կլինի նրա երրորդ օլիմպիադան: Սիդնեյում նա զբաղեցրել էր 4-րդ տեղը, իսկ Աթենքում պայքարից դուրս էր մնացել արդեն 2-րդ փուլում: Ֆեդերերի համար օլիմպիական խաղերում հանդես գալը մեծ պատիվ է եւ լավագույն հիշողությունների հետ է կապված: Հենց Սիդնեյի օլիմպիադայի ժամանակ Ֆեդերերը ծանոթացավ ընկերուհու՝ Միրկա Վավրինեցի հետ:

Ռոջեր Ֆեդերերը թեեւ մի շարք մրցաշարերի հաղթող է, սակայն մինչ օրս նրան չի հաջողվել դառնալ «Ռոլան Գարոսի» չեմպիոն: Եվ շվեյցարացի թենիսիստը մտադիր է հաջորդ մրցաշրջանում անպայման շահել այդ մրցաշարը: Իսկ նրա ամենասիրելի մրցաշարը Ուիմբլդոնն է:

Թենիսի ամենաերկարատեւ մրցախաղը

Շվեյցարացի երկու թենիսիստներ՝ 24-ամյա Սիրիլ Կամերմանը եւ 18-ամյա Սիմոն Մյունցինգերը Դերենդինգեն քաղաքի կորտում անցկացրին թենիսի պատմության մեջ ամենաերկարատեւ մրցախաղը: Նրանք 26 ժամ 15 րոպե անցկացրին կորտում՝ խաղալով 56 խաղափուլ: Շվեյցարացի թենիսիստները 10 րոպեով գերազանցեցին համաշխարհային նախկին նվաճումը, որը պատկանում էր ավստրիացիներ Հանս Խոռնղլերին եւ Պատրիկ Ֆեհրինգերին:

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Միավորների առաջին կորուստը

Շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունում հարյուր տոկոսանոց արդյունքի հասած հայ չորս շախմատիստներն էլ չորրորդ տուրում առաջին միավորները կորցրին: Ավետիք Գրիգորյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Սամվել Տեր-Սահակյանն իրենց պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի, իսկ ահա Նորայր Թորոսյանն անդրանիկ պարտությունը կրեց: Առաջին երեք շախմատիստները տարիքային իրենց խմբերում վաստակել են 3,5-ական միավոր, իսկ Թորոսյանն ունի 3 միավոր:

Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում Ավետիք Գրիգորյանը 9 շախմատիստների հետ 3,5-ական միավորով գլխավորում է աղյուսակը: 3 միավոր ունի Հովիկ Հայրապետյանը, որը ոչ-ոքի խաղաց Դանիել Լինչեւսկու հետ: Խաղաղ դաշն կնքեց նաեւ Հրանտ Մելքումյանը, որի մրցակիցը Ալֆրեդո Պենան էր: Նրա հաշվին գրանցված է 2,5 միավոր:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարում առաջատարներն են իսպանացի Դավիթ Ռեգուերոն ու լեհ Կասպեր Պիորունը, որոնք 4-րդ անընդմեջ հաղթանակները տոնեցին: Ռոբերտ Հովհաննիսյանը 3,5 միավորով հետապնդողների թվում է: Նրանցից մեկ միավոր պակաս ունի Դավիթ Գեւորգյանը, որը ոչ-ոքի խաղաց իրանցի Միրան Խադեմիի հետ:

Չորս շախմատիստներ 100 տոկոսանոց արդյունքով գլխավորում են մինչեւ 14 տարեկանների մրցաշարային աղյուսակը: Սամվել Տեր-Սահակյանը 3,5 միավոր ունի: Այս տուրում հաղթեցին Ռոբերտ Աղասարյանն ու Վահե Բաղդասարյանը: Առաջինը վաստակեց 3 միավոր, 2-րդը՝ 2:

Մինչեւ 12 տարեկանների մրցաշարում էլ չորս պատանիներ առայժմ միավոր չեն կորցրել: Բացի Նորայր Թորոսյանից, պարտություն կրեց նաեւ Հովհաննես Գաբուզյանը, որն ունի 2,5 միավոր:

Մինչեւ 10 տարեկանների մրցաշարում հաջող է խաղում Տիգրան Հարությունյանը, որը հաղթելով ֆրանսիացի Բենոյթ Պուտենին, վաստակեց 3,5 միավոր եւ երեք առաջատարներին զիջում է կես միավորով: Հաջողության հասան նաեւ Հրանտ Մեժլումյանն ու Մանուել Պետրոսյանը, որոնք վաստակեցին 3-ական միավոր:

Աղջիկների մրցաշարում առավել հաջող է հանդես գալիս Սվետլանա Միրզաբեկյանը, որը մինչեւ 12 տարեկանների մրցաշարում հաղթելով հնդիկ շախմատիստուհի Սահաջասրիին, վաստակեց 3 միավոր: 2,5 միավոր ունի Նունե Դարբինյանը (18 տ.), որը ոչ-ոքի խաղաց: Նույնքան միավոր վաստակեց նաեւ Լուսինե Թորոսյանը (մինչեւ 14 տ.)՝ հաղթելով սերբ Լենա Միլադինովիչին: Առաջին միավորը վաստակեց Արուսյակ Կարխանյանը (մինչեւ 16 տ.): Հաղթանակ տոնեց նաեւ Մարիամ Մանուկյանը (10 տ.)՝ վաստակելով 2 միավոր:

Մրցակիցները հայտնի են

Վաղը Խանտի Մանսիյսկում կմեկնարկի շախմատի աշխարհի գավաթի հերթական խաղարկությունը: Պատվավոր մրցանակը վիճարկող 128 շախմատիստների թվում են աշխարհի ներկայիս գավաթակիր Լեւոն Արոնյանը, Վլադիմիր Հակոբյանը, Զավեն Անդրեասյանը, եւ ԱՄՆ-ում բնակվող Վարուժան Հակոբյանը: ՖԻԴԵ-ի որոշմամբ աշխարհի գավաթի խաղարկությունն անցկացվելու է նոկաուտ համակարգով եւ բաղկացած կլինի 7 փուլից: Յուրաքանչյուր փուլում շախմատիստները զույգեր կկազմեն եւ միմյանց հետ 2 պարտիայից բաղկացած մրցախաղում կորոշեն հաղթողին: Հավասար արդյունքի դեպքում կնշանակվի լրացուցիչ մրցախաղ արագ շախմատի, հարկ եղած դեպքում նաեւ կայծակնային շախմատի կանոններով: Իսկ եզրափակիչ՝ 7-րդ փուլում շախմատիստները հաղթողին կորոշեն 4 պարտիայից բաղկացած մրցախաղում: Աշխարհի գավաթակիրը հայտնի կդառնա դեկտեմբերի 17-ին:

Վաղը կկայանա 1-ին փուլի 1-ին տուրը: Աշխարհի գավաթակիր Լեւոն Արոնյանը կմրցի արգենտինացի Խուան Պաբլո Հոբաիցայի հետ: Վլադիմիր Հակոբյանի մրցակիցը ուզբեկստանցի Անտոն Ֆիլիպովն է: Զավեն Անդրեասյանին բաժին է ընկել ԱՄՆ-ում բնակվող Ալեքսանդր Օնիշչուկը: Իսկ Վարուժան Հակոբյանը ուժերը կչափի իսրայելցի Միքայել Ռոիզի հետ:

Առաջատարն Իվանչուկն է

Մոսկվայում ընթանում է կայծակնային շախմատի աշխարհի առաջնությունը: Առաջին շրջանում անցկացված 19 տուրից հետո առջեւից է ընթանում ուկրաինացի գրոսմայստեր Վասիլի Իվանչուկը: Նա տոնել է 11 հաղթանակ, 5 պարտիա ավարտել ոչ-ոքի, 3-ում պարտվել եւ վաստակել է 13,5 միավոր: Հաջորդ տեղերում են Ալեքսանդր Գրիշչուկը (13), Գատա Կամսկին (12,5), Պետեր Լեկոն (12), Վիշվանաթան Անանդը (11,5) եւ Վլադիմիր Կրամնիկը (10,5): Անհաջող է հանդես գալիս աշխարհի 12-րդ չեմպիոն Անատոլի Կարպովը, որը 5,5 միավորով եզրափակում է աղյուսակը:

Տեւեսի հեռացումը ճակատագրական եղավ

Երբ եվրոպական երկրների ֆուտբոլային հավաքականները դեռ նոր ավարտեցին Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի հանդիպումները, ապա Հարավային Ամերիկայի ընտրանիներն արդեն վիճարկում են 2010-ի աշխարհի առաջնության ուղեգրերը: Ինչպես միշտ, այս գոտու 10 հավաքականներ երկու շրջանից բաղկացած մրցաշարում վիճարկում են իրենց հատկացված հինգ ուղեգրերը: Դրանցից չորսին կտիրեն 1-4-րդ տեղերը զբաղեցրած հավաքականները, իսկ 5-րդ տեղը գրաված թիմն անցումային խաղերում ուղեգիրը կվիճարկի ԿՈՆԿԱԿԱՖ-ի գոտում 4-րդ տեղը զբաղեցրած հավաքականի հետ:

Ընտրական մրցաշարի 4-րդ տուրում անակնկալ գրանցվեց: Արգենտինայի հավաքականը, որ մինչ այդ 3 անընդմեջ հաղթանակ էր տոնել ու գլխավորում էր աղյուսակը, հյուրընկալվելիս 1-2 հաշվով զիջեց Կոլումբիայի ընտրանուն: Խաղից մեկ ժամ առաջ Բոգոտայում այնպիսի ուժեղ անձրեւ տեղաց, որ կազմակերպիչները ստիպված էին խաղադաշտը ծածկել: Այդ խաղում վճռորոշ եղավ արգենտինացի Տեւեսի հեռացումը խաղադաշտից: Մնալով 10 հոգով, արգենտինացիները չկարողացան դիմագրավել մրցակցի գրոհներին, թեեւ 37-րդ րոպեին հաշիվը բացել էին շնորհիվ Մեսիի դիպուկ հարվածի: Ընդ որում, 2-րդ խաղակեսի սկզբին Մեսին կարող էր 2-րդ գոլը խփել, սակայն վրիպեց: Իսկ ահա կոլումբիացիներն իրենց հնարավորությունը ձեռքից բաց չթողեցին: Բուստոսի եւ Մորենոյի դիպուկ հարվածների շնորհիվ Կոլումբիայի հավաքականը կամային հաղթանակ տոնեց, որի շնորհիվ աղյուսակում 8 միավորով զբաղեցրեց 2-րդ տեղը:

Գոլառատ ստացվեց Վենեսուելայի եւ Բոլիվիայի մրցավեճը: Խփվեց 8 գոլ, որից 5-ի հեղինակը դաշտի տերերն էին: Վենեսուելայի հավաքականը 6 միավորով տեղ զբաղեցրեց 4-րդ հորիզոնականում: Իսկ Բոլիվիայի ընտրանին 4 խաղից հետո 1 միավորով նախավերջին տեղում է: Աղյուսակը եզրափակում են էկվադորցիները, որոնք պարտվել են բոլոր երեք հանդիպումներում էլ: Էկվադորցիները 5-1 հաշվով ջախջախեցին Պերուի ֆուտբոլիստներին, իսկ Չիլիի հավաքականը սեփական հարկի տակ 0-3 հաշվով զիջեց պարագվայցիներին:

Էջը պատրաստեց **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

Հարավային Կովկասում նախագահության երկրորդ ժամկետին գնալն արդեն դարձել է սովորություն

1-ին էջից

Հաշվի առնելով կոռուպցիայի դեմ «պայքարում» տարբեր կողմնորոշման մարդկանց, առավել եւս այս կամ այն քաղաքական գործչի նախկին թիմակիցների ձերբակալությունները` թերեւս կարելի է հստակ պատկերացնել, թե մոնիտորինգի ենթակա երեւույթների ցանկի ընդլայնումն ինչպիսի գործիք կարող է դառնալ նախընտրական շրջանում:

Բացի այդ, նկատի ունենալով նախագահական ընտրությունների շեմին արդեն իսկ ձեւավորված անհավասար պայմաններն ու թեկնածուների մրցակցության համար դրանց պահպանման կարեւորությունը, նման ֆինանսական լծակը կարող է շատ հարցերում դառնալ զսպող, անգամ ճնշում գործադրելու ավելի հեշտ ու արդյունավետ տարբերակ, քան զուտ ուժային, իրավապահ կառույցների համար դասապարտելի միջոցները` ի դեմս, ասենք, ընդդիմադիր գործելակերպ որդեգրած հեռուստաընկերության ու ռադիոյի եթերազրկման:

Ինչեւէ, վրաց ընդդիմությունը շարունակում է բանակցային գործընթացը` միասնական ճակատով նախագահական ընտրություններում հանդես գալու ուղղությամբ: Մասնավորապես, ի սկզբանե միասնական ընդդիմադիր թեկնածուի առնչությամբ պատրանքներն ամենից առաջ ցրող լեյբորիստ Շալվա Նաթելաշվիլին ընդդիմադիր մյուս կուսակցությունների հետ համագործակցության եւ խորհրդակցությունների անցկացման պատրաստակամություն է հայտնել, ընդգծելով, որ շատ հարցերում միայն միասնական լինելով է հնարավոր լուծում գտնել:

Իսկ ընդդիմության միասնական հռչակած թեկնածուի նախագահության դեպքում Վրաստանի համար մեկ ֆիգուրի` վարչապետի պաշտոնին հավակնող նախկին ԱԳ նախարար Սալոմե Զուրաբիշվիլին «ֆրանսիական տոմսն» է իրականացնում:

Եվ այս ամենը տեղի է ունենում վրաց կառավարության կազմում փոփոխությունների զուգընթաց, ընդ որում, կառավարության տնտեսական կողմի նախարարներին փոխելու մտադրության բացակայության մասին արդեն իսկ հայտարարել է նոր վարչապետ Լադո Գուրգենիձեն:

Առավել հետաքրքրական է, որ վերջին մի քանի տարում ժողովրդավարության «դրսեւորումը» սրա-նրա քթի տակ թափ տվող Վրաստանում նախագահական արտահերթ ընտրություններին այնպես են պատրաստվում, որ միջազգային կառույցներին ու ամերիկյան պաշտոնյաներին մնում է միայն հերթական մտահոգությունները բարձրաձայնել:

Վրաստանի հանրային հեռուստատեսության ու վարդյա հեղափոխության իրականացման գործում Սաակաշվիլու «գործընկեր» «Ռուսթավի-2» հեռուստաընկերությունը, որոնց «ձայնակցում է» նաեւ մեկ այլ խոշոր հեռուստաընկերություն` «Մզե»-ն, շարունակում են երկրի նախագահի քարոզչությամբ զբաղվել:

Ընդդիմադիր կուսակցությունների ու դրանց առաջնորդների համար էլ նոյեմբերի 2-ի հանրահավաքին «գործընկեր» դարձած «Իմեդի» եւ «Կավկասիա» հեռուստաընկերությունների եթերը մնում է փակ, ավելին, «Իմեդին» արդեն չունի անգամ լիցենզիա` այդպիսով քարոզչության իրականացման համար բացարձակապես անհավասար պայմաններ ձեւավորելով երկրորդ ժամկետի նախագահության ձգտող Միխեիլ Սաակաշվիլու եւ ընդդիմության համար: (Ինչպես կարելի է նկատել, նմանություններն այս առումով շատ մեծ են Հայաստանի հետ):

Ու չնայած այս ամենին, ընդդիմադիր կուսակցությունները հերթական հանրահավաքն անցկացնելու պատրաստություն են տեսնում` ավտովազքով երկրի տարբեր տարածաշրջաններում իրազեկման ու հանրահավաքի մասնակցության քարոզչություն են իրականացնում հենց այն ժամանակահատվածում, որի ընթացքում ակնկալվում է նախագահ Սաակաշվիլու հրաժարականը:

Հիշեցնենք, որ նախագահական արտահերթ ընտրություններին առաջադրվելուց առաջ` նոյեմբերի 21-26-ը Սաակաշվիլին պետք է ներկայացնի հրաժարական, իսկ մինչ այդ` նոյեմբերի 25-ին ընդդիմությունը կրկին կհավաքվի բողոքի ցույցի` որպես առաջնային պահանջելով, ի թիվս այլ հարցերի, նաեւ «Իմեդի» հեռուստաընկերության եթերի վերականգնումը:

Իսկ Թբիլիսիում պատրաստվում են տոնել «վարդերի հեղափոխության» 4-րդ տարեդարձը...

Կայացավ թրաֆիկինգի դեմ պայքարի տարածաշրջանային ծրագրի շնորհանդեսը

Երեկ Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) տարածաշրջանային ծրագրի պաշտոնական շնորհանդեսը: Բացման խոսքով հանդես եկավ թրաֆիկինգի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Ջյունիկ Աղաջանյանը: Նա ներկայացնելով ծրագիրը նշեց, որ մեր երկրում թրաֆիկինգի դեպքերը համեմատաբար փոքր թիվ են կազմում, եւ դա կապված է ազգային մենտալիտետի հետ: Իսկ հարեւան Վրաստանից տարանցիկ դեպքերը շատացել են, ուստի տարածաշրջանային համագործակցությունը դառնում է առաջնային: Ժնեւի Աշխատանքի միջազգային գրասենյակի տնօրեն Ռոջեր Փլանթը իր ելույթում նշեց, որ տարեկան աշխարհում լինում են թրաֆիկինգի 12,3 միլիոն դեպքեր: Թրաֆիկինգի բիզնեսը աշխարհում թմրանյութերից հետո 2-րդ տեղում է ու տարեկան բերում է մոտ 32 միլիարդ դոլար շահույթ: Հարավկովկասյան երեք երկրներում ազգային գործողությունների ծրագրերի (ԱԾ) հզորացումը, թրաֆիկինգի դեմ պայքարի իրավական դաշտի բարեփոխումը, ինչպես նաեւ միջազգային եւ տարածաշրջանային համագործակցությունը ուղղվելու են թրաֆիկինգի դեմ պայքարի հեռանկարային հարցեր լուծելուն: Անցած տարվա վերջին սկիզբ առած ծրագիրը երկամյա է եւ լրացուցիչ համաֆինանսավորում կստանա նաեւ ԱՄԿ-ից եւ այլ գործընկեր կազմակերպություններից: Ծրագրին տրամադրվել է 1 միլիոն 885 հազար եվրո:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշում
21 նոյեմբերի 2007 թվականի թիվ 367 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 237 Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «դ» եւ «ե» կետերով` Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի սեպտեմբերի 20-ի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 237 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ` Կանոնակարգ 2) կատարել հետեւյալ փոփոխությունը եւ լրացումը.

1.1 Կանոնակարգ 2-ի 24-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«24. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի եւ օտարերկրյա բանկերի` Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից Կենտրոնական բանկում տեղաբաշխվող դրամով պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 8 տոկոսի չափով»:

1.2 Կանոնակարգ 2-ը լրացնել նոր 24.1 կետով հետեւյալ բովանդակությամբ.

«24.1 Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի եւ օտարերկրյա բանկերի` Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից Կենտրոնական բանկում տեղաբաշխվող արտարժույթով պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է`

ա) մինչեւ 2007 թվականի դեկտեմբերի 6-ը` ներգրավված միջոցների 8 տոկոսի չափով,

բ) 2007 թվականի դեկտեմբերի 6-ի դրությամբ եւ դրանից հետո` 12 տոկոսի չափով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունման պահից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ *Տ. Սարգսյան*
2007 թ. նոյեմբերի 21
Երեւան

Լույս է տեսել Արմեն Մալխասյանի *«20 000 Տաղանդ ծովի համար»* պատմավեպը, որտեղ ներկայացված է Ք. Ա. առաջին դարում Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները:

Գրքում նկարագրված է Մեծ Հայքի թագավոր Արտավազդ Երկրորդի ժամանակաշրջանը:

ԱՐՄԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
20 000
ՏԱՂԱՆԴ ԾՈՎԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-07/84» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում` **«ՀՀ պետության կարիքների համար գույքի ձեռքբերման» գնման պայմանագիր կնքելու նպատակով**: Գնանշման հարցման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ», «Բեջ-գալ» ՍՊԸ -ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով` ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.` 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում` նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը` գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 16.00:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը` ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, ծանուցում է **ՀՀ Սյունիքի մարզի [illegible] գործող «[illegible]» ՓԲԸ-ի** [illegible] ջրային ռեսուրսից 10.0 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագծից:

Բոլոր ցանկացողները [illegible] փաստաթղթի նախագծի նախնական [illegible] կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը [illegible] ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունում (հասցեն` Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական [illegible] տեղի կունենա 2007 թ. նոյեմբերի 29-ին, ժամը 16-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 30-ին, ժամը 15-ին բնապահպանության նախարարությունը, «ԱՌԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն, Շիրակի մարզպետարանը կազմակերպում են հասարակական լսումներ Շիրակի մարզի Ջրափիի լեռնանցքում կառուցվելիք հողմաէլեկտրակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Երեւան, Մաշտոցի 164 եւ Երեւան, Կոմիտասի 29 հասցեներում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշում
21 նոյեմբերի 2007 թվականի թիվ 368 Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 09-Ի ԹԻՎ 39 Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «դ» եւ «ե» կետերով` Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 09-ի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ` Կանոնակարգ 2) կատարել հետեւյալ փոփոխությունը եւ լրացումը.

1.1 Կանոնակարգ 2-ի 24-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«24. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի եւ օտարերկրյա բանկերի` Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից Կենտրոնական բանկում տեղաբաշխվող դրամով պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 8 տոկոսի չափով»:

1.2 Կանոնակարգ 2-ը լրացնել նոր 24.1 կետով հետեւյալ բովանդակությամբ.

«24.1 Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի եւ օտարերկրյա բանկերի` Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից Կենտրոնական բանկում տեղաբաշխվող արտարժույթով պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 12 տոկոսի չափով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ *Տ. Սարգսյան*
2007 թ. նոյեմբերի 21
Երեւան

---

www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրված` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրված է տպագրության` 22.11.2007, գինը` 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում` Արշակունյաց 2: